ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ РЕСПУБЛИКА АРМЕНИЯ REPUBLIC OF ARMENIA

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ИНФОРМАЦИОННЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОЙ АССОЦИАЦИИ ПОТРЕБИТЕЛЕЙ
INFORMATION MAGAZINE OF NATIONAL ASSOCIATION OF CONSUMERS


ՍՊԱՌՈՂ

ՍԿՍԱԾ
1997
թվականից

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ 2020



#4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019



Սիրելի հայրենակիցներ

Ամանորը հեքիաթի սպասում է: Հեքիաթ, որ հավաստաչափ արևուր ու լուսավոր է թե՛ մեծերի, թե՛ երեխաների համար: Այն նաև հույսի, երազանքների կատարման ու իմաստության սպասում է:

Թող որ 2020 թվականին բազմապարկվի ամեն լավ բան, իսկ մեծ ու փոքր անհաջողությունները մնան հետևում: Թող գոնի վերածվի եկող տարվա յուրաքանչյուր օրը, անսահման լինեն հաջողությունն աշխատանքում և սերը՝ ընտանիքում:

Վայելենք կյանքն ու գոնը մեր սիրելիների ու մերերիմների հետ: Սիրենք և պահպանենք իրար:

Ջերմագին Ամանոր ու Աստր Ծնունդ

Մելիտա Հակոբյան

Սպառողների ազգային ասոցիացիայի և Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻՄՄ նախագահ

ՍՊԱՌՈՂ

տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերական

Հիմնադիր և հրատարակիչ՝
ԱՆՆԱ Սպառողների ազգային ասոցիացիա

ՄԵԼԻՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր խմբագիր

ՍԱՄՎԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Գործադիր տնօրեն

ՆԱՐԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր

ԼԻԱ ՕՍԻՊՅԱՆ
Սննդամթերքի անվտանգության վերլուծության պատասխանատու, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԹՅԱՆ
Ասոցիացիայի փոխնախագահ, մարքեթինգի և մոնիթորինգային հետազոտությունների պատասխանատու, սննդի ապահովման ծառայությունների սերտիֆիկացման փորձագետ, սննդի որակի աուդիտոր

ԼԵՎՈՆ ԱՃԵՄՅԱՆ
Գյուղմթերքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու, Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի անդամ

ԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Ասոցիացիայի արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, փորձագետ

ՀԱՍՄԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, PR մասնագետ

ՌՈԶԱԼԻԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Լաբորատորիաների գծով փորձագետ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵԼԻՔՅԱՆ
Ասոցիացիայի գլխավոր փորձագետ, Երևանի Պետական տնտեսագիտական համալսարանի Տեխնոլոգիաների և բնական գիտությունների ամբիոնի դոցենտ, Տնտեսագիտության թեկնածու

ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ
Տեղեկատվության վերլուծության պատասխանատու, Երևանի Ագրարային համալսարանի դոցենտ

ԺԵՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԱԻԴԱ ԻՍԿՈՅԱՆ
Իրավախորհրդատու, ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

ԱՂԱՎՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լրագրող

ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ
Դիզայներ

ԱՐԵՎԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Լուսանկարիչ

ՍՊԱՌՈՂ

տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերականի խմբագրական խորհուրդ

ՀԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՎԻԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քիմիական և ֆիզիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ամերիկյան քիմիական ընկերության և Ամերիկյան Ֆոտոկենսաբանության ընկերության անդամ

ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Բժիշկ-ճառագայթաբան,
Բժշկական գիտությունների դոկտոր

ԵՐԵՄ ՉԱԽՈՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ նախագահության անդամ

ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ,
Տնտեսագիտության թեկնածու

ԱՐՍԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՅՈՒՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Հայաստանի վաճառականների միության նախագահ

ԿԱՌԼԵՆ ԱԴԱՄՅԱՆ
ՌԴ Չափագիտության ակադեմիայի ակադեմիկոս,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԳԱՅԱՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ

ԿԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԴՈՐԱ ՍԱՔՈՒԼՅԱՆ
Մոնրեալի ՄաքԳիլ համալսարանի դասախոս, դոկտոր, պրոֆեսոր

ԻՐԻՆԱ ՎԻՆՈԳՐԱԴՈՎԱ
Սպառողների ազգային ասոցիացիայի պատվավոր անդամ

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՆ 1998-ԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (CONSUMERS INTERNATIONAL) ԱՆԴԱՄ Է







Հեռավոր 1990-ականներին, երբ մեր երկրում սպառվում էր, ինչ ասես և որտեղ ասես, իրավիճակից դուրս գալու միակ ուղին հայրենական արտադրություն ծավալելու համար հնարավոր ելքեր փնտրելն ու Հայաստանի տնտեսական առաջընթացն ապահովելն էր, ինչն անելու դժվարին պարտավորությունը ստանձնեց 1991 թ. ՀՀ-ում սպառողական շարժման հիմնադիր, բժիշկ-համաճարակաբան Մելիտա Հակոբյանը: Նրա համառ ջանքերի ու անխոնջ աշխատանքի արդյունքում 1993 թ. Վաճառականների միությունում, որի փոխնախագահն էր Մելիտա Հակոբյանը, ստեղծվեց սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության ծառայություն: Այնուհետև, 1995 թ., հիմնադրվեց «Աննա» կին սպառողի շահերի պաշտպանության միությունը, որի նպատակն էր սպառողների շահերի պաշտպանությունը բոլոր բնագավառներում, ազգաբնակչության առողջության պահպանումը և առողջ սերնդի ձևավորումը: 1999 թ. «Աննա» կին սպառողի շահերի պաշտպանության միությունը վերանվանվեց «Աննա» Սպառողների ազգային ասոցիացիա: Այս կառույցի կազմում մշտապես ընդգրկվել են ակադեմիկոսներ, գիտնականներ, բժիշկներ, մանկավարժներ և այլ մասնագետներ, որոնց շնորհիվ ձևավորվել է վստահության մթնոլորտ, ինչն աշխատանքային լայն հնարավորություններ է ստեղծել հայրենական արտադրություն նախաձեռնողների և լայն ընտրություն՝ այդ արտադրանքից օգտվող սպառողների համար:

Արդեն 2003 թ. հիմնադրվել է Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա Իրավաբանական անձանց միությունը, որի հիմնադիր անդամն է Սպառողների ազգային ասոցիացիան: Գործունեության նպատակն է կայացնել սպառողական ինստիտուտը Հայաստանում և ձևավորել քաղաքակիրթ հասարակություն:

Բայց մինչև այդ, 1998-ին, Սպառողների ազգային ասոցիացիան արել էր հերթական կարևոր քայլը՝ անդամակցելով Սպառողների միջազգային կազմակերպությանը, որը գործում է գրեթե 6 տասնամյակ, ունի 200-ից ավել անդամ-կազմակերպություն ավելի քան 100 երկրից և աջակցում է սպառողներին ու պաշտպանում նրանց իրավունքներն ամբողջ աշխարհում: Միջազգային այս կառույցի անդամները պաշտպանում են սպառողների իրավունքները ողջ աշխարհում, ներկայացնում վերջիններիս շահերը ՅՈՒՆԵՍԿՕ-ում, Եվրամիությունում, Եվրախորհրդում, Առևտրի համաշխարհային կազմակերպությունում, ՄԱԿ-ի կառույցներում, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում և այլն:

Այս անդամակցությունը մեր երկրի համար հրա-

CONSUMERS INTERNATIONAL









շալի հնարավորություն էր Սպառողների ազգային ասոցիացիայի, մասնավորապես՝ Ներքին ու արտաքին հարաբերություններով զբաղվող բաժնի միջոցով բարձրաձայնելու հայ սպառողին մտահոգող խնդիրներն ու մեր երկիր ներմուծելու աշխարհում սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա ահռելի փորձը, ինչից շահում են սպառողները, այսինքն՝ ամբողջ հասարակությունը:

Արդեն այսօր, այս համագործակցության վավերացումից 20 տարի անց, հրաշալի հնարավորություն է ստեղծվել նշելու այս գործակցության տարեդարձը՝ շրջապատված հայրենական լավագույն արտադրողներով ու ծառայություն մատուցողներով, սրտացավ մասնագետներով և այս ամենը բարձր գնահատող հայ սպառողներով: Այս առիթով Սպառողների ազգային ասոցիացիայի և «Հ1 Հանրային վարկանիշ» ՍՊԸ-ի կողմից Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում կազմակերպված միջազգային մրցանակաբաշխությունը՝ համեմված համերգային կատարումներով ու հանդիսատեսին անակնկալ մատուցած խաղարկություններով, լավագույն ամփոփումն էր տարիների անդադար ու նվիրված աշխատանքի, իսկ երեկոյի ամենամեծ անակնկալը թերևս Սպառողների միջազգային կազմակերպության նախագահ Մարիմութու Նեդսոնի հաճելի ներկայությունն էր, հայ սպառողին ուղղված ողջույնի խոսքը, ապա նաև մի քանի մրցանակների հանձնումը հայրենական լավագույն ընկերություններին: Սա ևս վկայություն էր երկուստեք արդյունավետ գործակցության: Իսկ այս մրցանակաբաշխությունը ոչ միայն արդյունքների ամփոփում էր, այլև նոր, ավելի հզոր ազդակ հայ արտադրողներին ու ծառայություն մատուցողներին շարունակելու իրենց գործունեությունը՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և սպառողների բարօրության:

Սպառողների ազգային ասոցիացիան, Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ-ը և Սպառողների միջազգային կազմակերպությունը շնորհավորում են միջազգային մրցանակաբաշխության մասնակից ընկերություններին՝ վստահ, որ դեռ երկար տարիներ նրանց արտադրանքն ու ծառայությունները կարժանանան սպառողների վստահությանը և բարձր գնահատականին ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս:



Grand Candy «ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Ազգային ապրանքանիշ և սպառման առաջատար» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Գրանդ Քենդի» ընկերությանը:



Մսնդի հայրենական արտադրության առաջատար «Գրանդ Քենդի» ընկերությունը հայկական շուկայում է արդեն 20 տարի: Ընկերության արտադրանքը բարձր որակի շնորհիվ դարձել է ազգային պարծանք Հայաստանում և երկրի այցեքարտը նրա սահմաններից դուրս: Ընկերությունն այսօր արտադրում է ավելի քան 400 անուն ապրանքատեսակ և զբաղեցնում է Հայաստանի հրուշակեղենի շուկայի 40 տոկոսից ավելին: Տեսականին ներառում է ավանդական, նաև տեղական շուկայի համար միանգամայն նոր ապրանքատեսակներ: Ընկերությունը միակն է Անդրկովկասում, որը զբաղվում է կակաո հատիկավորի մշակմամբ:

«Գրանդ Քենդին» լայնորեն սպառվում է սեփական առաքման մանրամեծածախ ցանցի միջոցով՝ իր արտադրանքն անմիջականորեն առաքելով հանրապետության 7500 առևտրի կետեր, և Արցախում ու Երևանում ունի 22 ֆիրմային խանութ: Դրա շնորհիվ է, որ ընկերության արտադրանքը միշտ թարմ է հասնում սպառողին: «Գրանդ Քենդիի» արտադրությունը սերտիֆիկացված է ISO 9001:2015 որակի կառավարման և ISO 22000:2005 սննդի անվտանգության կառավարման չափանիշերով: Ընկերության արտադրանքի առավելությունն ու բարձր որակի գրավականը բացառապես բնական հումքն է: Այն մանրազնին ստուգման է ենթարկվում նրա կենտրոնական լաբորատորիայում, որը հավաստագրված է ՀՍՏ ISO 17025:2005 ստանդարտի համաձայն: 2019 թվականի ապրիլին ընկերությունը սերտիֆիկատ է ստացել նաև սննդի արտադրանքի անվտանգության կառավարման FSSC 22000V4.1. ստանդարտներին համապատասխան:

«Գրանդ Քենդին» այսօր տեղական արտադրության ոլորտում Հայաստանի Հանրապետության ամենախոշոր գործատուն է և ունի 3400 աշխատակից, որոնցից յուրաքանչյուրն առաջնորդվում է մեկ կարգախոսով՝ «Մեր որակը մեր հպարտությունն է»:





ՄԵՐ ՈՐԱԿԸ ՄԵՐ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ Է

«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՊԱՂՊԱՂԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Պահանջարկի առաջարար և որակի չափանիշ» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Գրանդ Քենդի» ընկերությանը:

«Գրանդ Քենդիի» բարձրորակ պաղպաղակները հայաստանյան շուկա մուտք գործեցին 2001 թվականին և անմիջապես սիրվեցին թե՛ մեծերի, թե՛ փոքրերի կողմից: Ամեն տարի «Գրանդ Քենդին» շուկային է ներկայացնում պաղպաղակի նոր արտադրատեսակ: Այսօր արդեն ընկերությունն ունի 68 անուն պաղպաղակ, որն արտադրվում է ժամանակակից եվրոպական տեխնոլոգիայով և միայն բնական հումքից՝ բացառելով արհեստական հավելանյութերը: Տեսականին ներառում է պլոմբիր, սերուցքային, շոկոլադե և մրգային բնական հավելումներով պաղպաղակներ՝ ջնարակապատ և ոչ ջնարակապատ: Եվ եթե փոքրիկները, որոնք պաղպաղակի հիմնական սպառողներն են, որոշել են «Գրանդ Քենդի» պաղպաղակներին շնորհել լավագույնի տիտղոսը, ապա նրանց անաչառ գնահատականը պետք է ընդունել որպես օրենք և ասել, որ «Գրանդ Քենդիի» պաղպաղակները լավագույնն են:



ՄԵՐ ՈՐԱԿԸ ՄԵՐ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ Է

«ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Մեր աշխատանքը ձեր անվտանգության երաշխիքն է

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Սպասարկման որորտում անվտանգության երաշխավոր» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությանը:



Գազ սպառող բաժանորդների ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում, այդ թվում՝ գազօգտագործող սարքավորումների կարգաբերում և վերանորոգում, արտահոսքի վերացում, ծխաօդատար համակարգի զննում, փականների քսայուղում, ձայնաազդանշանային անվտանգության համակարգի թեստավորում և այլն: Սրանք են «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերության նպատակն ու առաքելությունը:

Գործունեության 12 տարիների ընթացքում ընկերությունն անցել է կայացման և զարգացման կայուն ճանապարհ: Եվ տարեցտարի դրական տեղաշարժ է արձանագրել գազի օգտագործման անվտանգությունն ապահովելու գործում, ինչի մասին վկայում է դժբախտ պատահարների քանակի նվազումը:

Այսօր «Էյ-Ի-Ջի-Սերվիսը» գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, ունի 15 տարածքային և իրենց կազմում 36 տեղամասային ծառայություն, որոնք սպասարկում են ավելի քան 700 հազար բնակիչ-բաժանորդի և մոտ 6000 բաժանորդ-կազմակերպություն: Յուրաքանչյուր ամիս հանրապետության տարածքում իրականացվում է ավելի քան 100 հազար բաժանորդի ներտնային գազասպասարկման համակարգերի տեխնիկական սպասարկում:

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությունը, հաշվի առնելով սեփական աշխատանքի կարևորությունը սպառողների կյանքում, հետևողական է իր գործունեության յուրաքանչյուր քայլին, դետալին ու մանրուքին: Այստեղ կարևորվում են կատարված աշխատանքի թափանցիկությունն ու հրապարակայնությունը: Իսկ սպառողների հետ անմիջական աշխատանքը և փոխըմբռնումը նպաստում են ընկերության և սպառողի արդյունավետ փոխհամագործակցության ձևավորմանը հանուն վերջինիս ապահովության և անվտանգության:



ԵՐԵՎԱՆԻ ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Հիմքը՝ հայկական, վայելքը՝ արքայական



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Շամպայնագործության մեջ որակի և նրբահամության ՀՀ պատվիրակ ամբողջ աշխարհում» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Երևանի Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ին:

1939 թ., գրեթե մեկ դար առաջ, Հայաստանում սկիզբ դրվեց իր տեսակի մեջ եզակի՝ Երևանի շամպայն գինիների գործարանի գործունեությանը: Միտքը, ջանքն ու համառությունը մեկտեղվեցին և դարձան ավանդույթի, դասականի, ազգայինի ու յուրօրինակի մենակարկը: Շամպայն գինիների գործարանը վաղուց դարձել է ազգային ապրանքանիշ և ինչ-որ իմաստով խորհրդանիշ: Հայերը հպարտությամբ հյուրասիրում, իսկ արտասահմանցիները հաճույքով վայելում են արևահամ խմիչքները: Շամպայն գինիների գործարանը եզակի է, քանզի հենց այստեղ է արտադրվում շամպայն գինիների ողջ տեսականին ֆրանսիական տեխնոլոգիայով՝ դասականից մինչև հավաքածու: Գործարանի արտադրանքն ուրույն այցեքարտ է ինչպես Հայաստանում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Նրբահամ, դասական ու քիմքը շոյող շամպայնի, գինու և օղու տեսականիները վայելում են սպառողի համակրանքն ու սերը: Գործարանում արտադրվում են նաև 3-15 տարվա հնացման կոնյակներ, որոնք առանձնանում են իրենց հաճելի և յուրօրինակ համով: Համի և որակի գաղտնիքը թերևս պայմանավորված է միջազգային չափանիշներին համապատասխան արտադրության տեխնոլոգիայով, որակի հսկման լաբորատորիայով, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող մասնագետներով: Չմոռանանք նաև գլխավոր բաղադրիչը՝ արևահամ խաղողն ու բնական հումքը: Չէ՞ որ գինու արտադրության համար ընտրվում են ՀՀ տարբեր շրջաններում աճեցվող խաղողի լավագույն տեսակները:

Գործարանի արտադրանքը սերտիֆիկացված է, պահպանվել են ստանդարտների անհրաժեշտ բոլոր պայմանները: Եվ հենց այս պատճառով է, որ միջազգային ցուցահանդեսներում գործարանը բազմիցս պատվվել է ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներով, իսկ տեղացի սպառողների կողմից արժանացել ամենագլխավորին՝ վստահությանն ու համակրանքին: Իզուր չէ, որ ներկայումս գործարանը ՀՀ-ում ալկոհոլային խմիչքների արտադրության առաջատարներից է:





ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Քարշորակ հացամթերքի fո լնստրւթյունը

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Ավանդականի և արդիականի համադրություն, որակի ստուգանիշ» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ին:



Ինչ հայկական սեղան, եթե դրված չեն փրփուր լավաշն ու ավանդական հացի տեսականին, ինչ հայկական օջախ, եթե հյուրին չեն դիմավորում աղ ու հացով:

Սևանի հացի գործարանը 75 տարվա պատմություն ունի, հացամթերք արտադրելու, հայի ու հյուրի քիմքին հաճո հացամթերք արարելու փորձառություն:

Լինելով հանրապետության հացի շուկայի առաջատարը, առաջարկելով հացեղենի և հրուշակեղենի լայն տեսականի՝ ընկերությունը սպառողին ժամանակ առ ժամանակ զարմացնում ու հիացնում է նոր արտադրատեսակներով:

Ընկերության արտադրանքի գրեթե կեսը հայկական լավաշն է: Ցածր թթվայնությամբ, դյուրամարս ու առողջարար այս հացատեսակի շնորհիվ՝ Սևանի հացի գործարանի կողմից մշակված արտադրության հատուկ հոսքագիծն այսօր արդեն հեշտությամբ արտադրվում է նաև աշխարհի տարբեր հայաշատ վայրերում:

35 արտադրամաս, 760 աշխատակից, որոնք իրենց աշխատասիրությամբ, մասնագիտական բարձր հատկանիշներով, հացի տեխնոլոգիաներին լիարժեք տիրապետելով և միաժամանակ հավատարիմ մնալով հայկական, ավանդական հացի ստեղծման գաղտնիքներին, կարողանում են սպառողին մշտապես մատակարարել համեղ ու որակյալ, թարմ ու ախորժալի հաց:

Սևանի հացի գործարանի արտադրանքը տասնամյակներ շարունակ արժանանում է սպառողի գնահատականին, գործունեությունը՝ գնահատվում կառավարության կողմից: Պարբերաբար մասնակցելով սննդարդյունաբերական ցուցահանդեսների՝ գործարանը վայելում է առաջինը լինելու պատիվը:



«ՍԱՆՖՈՒԴ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Համի ու որակի եզակի համադրություն



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Լայն սպառում և պահանջարկի առաջատար» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Սանֆուդ» ընկերությանը:

Բարձրորակ, իրենց բաղադրությամբ բացառիկ և արևահամ այս մթերքներն արդեն 10 տարի հայ սպառողի խոհանոցի անբաժան մասն են:

Հայաստանում յուղաճարպային բնագավառի առաջատար «Սանֆուդ» ընկերությունը սպառողին առաջարկում է հալած բուսական խառնուրդի, սփրեդի, մարգարինի, խմորիչի լայն տեսականի՝ ներկայանալով Իմպերիա վկուսա, Յարսկայա, Մասելկո, Սոնյաչնա Դոլինա ապրանքանիշերով:

Կարևորելով սննդի ոլորտում մաքրամաքուր և առողջարար մթերքի ապահովումը՝ «Սանֆուդ» ընկերությունը հավատարիմ է արտադրանքի բարձր որակի ապահովման ու միջազգային ստանդարտների համապատասխանելու սկզբունքներին: Այս տարի բրիտանական ընկերության ուսումնասիրությունների արդյունքում ընկերությունն արժանացել է միջազգային ISO:22000 ստանդարտի հավաստագրի:

«Սանֆուդի» բարձր համային հատկանիշներով քիմքին հաճելի տեսականին միակն է տարածաշրջանում, որը պատրաստված է բացառապես բնական ճարպերից ու յուղերից, չի պարունակում կոնսերվանտներ և խոլեստերին:

Ժամանակակից, արդիական և գիտական ծավալուն տեխնոլոգիաներ, արտադրության, հայկական գործարար մշակույթի ընդլայնում, համագործակցություն հայ և արտերկրյա արտադրողների հետ: Սանֆուդի տեսականին օր-օրի ավելի մեծ պահանջարկ է վայելում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Ընկերության արտադրանքն այսօր արտահանվում է Վրաստան, Ռուսաստան և ԱՄՆ:

«Սանֆուդի» արտադրանքը պետք է լինի համեղ ու օգտակար, իսկ գինը՝ հասանելի յուրաքանչյուր սպառողի: Այս սկզբունքին հավատարիմ՝ գործունեության ողջ ընթացքում արտադրանքի որակը տարեցտարի բարձրացել է, գինը՝ մնացել անփոփոխ:

«Սանֆուդի» արտադրանքը գնահատված է ինչպես հայաստանցի, այնպես էլ օտարերկրյա սպառողի կողմից, քանի որ այս արտադրանքի մեջ արև կա ու իրական ջերմություն:





ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կնոջ առողջության պահպանման քո երաշխավորը

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ Քաղցկեղի դեմ պայքարի լավագույն կենտրոն» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Հայ-Ամերիկյան Առողջության Կենտրոն» հիմնադրամին:



1990-ականներին քաղցկեղը դատավճիռ էր, որին տեսականորեն ենթակա էր յուրաքանչյուր հայ կին: Այն, ինչ հասանելի էր արտերկրի կանանց, հայ կնոջ համար երազանք էր թվում: Հենց այդ տարիներին արդեն Հայ-Ամերիկյան Մշակութային Միությունը՝ ի դեմս Ռիտա Պալեանի, կատարեց առաջին քայլերը՝ հավատալով, որ կարող են հայ կնոջը փրկել քաղցկեղից:

1997-ին արդեն Ռիտա Պալեանի և Հրանուշ Հակոբյանի համառ ջանքերի և չսահանջելու վճռականության շնորհիվ դրվեցին իր տեսակի մեջ եզակի «Հայ-Ամերիկյան Առողջության Կենտրոն» բուժհաստատության հիմքերը: Մեկնարկը հեշտ չէր՝ հայ կնոջ համար խորթ էր հետազոտվելու հոգեբանությունը, իսկ քաղցկեղն օրեցօր երիտասարդանում էր: Հիմնադիրներն այստեղ էլ չսահանջեցին՝ աստիճանաբար ձևավորելով հետազոտվելու անհրաժեշտության և հիվանդությանը զոհ չգնալու մշակույթը: Կանայք ականատես էին լինում այնպիսի պատմությունների, որոնք վկայում էին՝ քաղցկեղը դատավճիռ չէ: Հարկավոր է հետազոտվել և ապրել առողջ, յուրաքանչյուրն ինքն է իր առողջ կյանքի երաշխավորը:

Հայ-Ամերիկյան Առողջության Կենտրոնում կա ամեն բան կնոջ առողջության պահպանման համար: Այստեղ արմատավորված են արևմտյան բժշկության նորամուծությունները ու ավանդույթները, իսկ եզակի սարքավորումները թույլ են տալիս հայտնաբերել քաղցկեղածին ամենաթաքնված ախտանիշն անգամ: Արդյունքը թվերն են և հազարավոր փրկված կյանքերը: Կենտրոնի ախտորոշումների շնորհիվ՝ քաղցկեղի ճիրաններից փրկվել է 9549 կին: 20 տարիների ընթացքում կատարվել է 626.608 հետազոտություն, իսկ կենտրոնի բացման օրից մինչև այսօր՝ կրծքագեղձի 311.778 հետազոտություն: Կենտրոնում հետազոտված 1760 տղամարդուց 70-ի մոտ հայտնաբերվել է քաղցկեղ:

Հայ-ամերիկյան համագործակցության 20-ամյա գործունեության հիմքում հազարավոր պատմություններ են, որոնց մի կողմում կինն է, մյուսում՝ փրկված ընտանիքների զավակների աղոթքներն իրենց հոգու հենարանի՝ մոր համար:





«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Սրտի այս կենտրոնը սրտով կենտրոն է:



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Սրտի վիրաբուժության առաջատար կենտրոն և բազմամյա գործունեություն» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Նորք-Մարաշ» ԲԿ-ին:

Սրտի առաջատար վիրաբույժ Հրայր Հովակիմյանի գլխավորությամբ և հայ ու ամերիկացի բժիշկների միասնական ջանքերով 1993 թ. ստեղծվեց «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնը: Հենց առաջին քայլերը բժշկական կենտրոնը դարձրին Հայաստանում սրտանոթային վիրաբուժության ոլորտում լավագույններից մեկը: Այստեղ՝ հայ արդի վիրաբուժության Ալմա մատերում, հմտացան և փորձ ձեռք բերեցին հանրապետության լավագույն սրտաբանները՝ համալրելով տարբեր բուժհաստատությունների սրտանոթային վիրաբույժների շարքերը:

Գործունեության առաջին օրից որդեգրված սկզբունքը՝ կարևորը թիմային աշխատանքն է, դարձավ հաստատության հաջողության գրավականը:

«Նորք-Մարաշ» ԲԿ-ում իրականացվում է անհետաձգելի, ամբուլատոր, ստացիոնար և դիսպանսեր բժշկական օգնություն: Կատարվում են տարբեր աստիճանի բարդության բոլոր վիրահատությունները:

Որքան բարդ, այնքան էլ ահռելի պատասխանատվություն է նայել օգնություն աղերսող ծնողի աչքերին ու խոստանալ՝ ամեն բան լավ է լինելու: «Նորք-Մարաշի» մանկական սրտաբանական կլինիկան միակն է ՀՀ-ում, որտեղ իրականացնում են տրանսկաթետերային ախտորոշիչ և բուժական միջամտություններ սրտի բնածին և կառուցվածքային արատների ոլորտում:

Սխալվելու, թերանալու հավանականություն թերևս չկա. բժիշկների մասնագիտական հատկանիշներն ու գերժամանակակից սարքավորումները թույլ չեն տալիս: Այստեղ միջամտություններն իրականացվում են ամերիկյան արտադրության գերժամանակակից եռաչափ քարտեզագրման համակարգի օգնությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում օգնության է հասնում արյան բանկը՝ ապահովված արյան բաղադրամասերի անհրաժեշտ քանակով: «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնում թևածում է սրտացավ վերաբերմունքը:





«ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Մենք պատրաստում ենք մսամթերք

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Հաստատուն որակ և լավագույն մսամթերք» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Բեկոն Պրոդուկտ» ընկերությանը:



Հզոր արտադրամաս, ժամանակակից տեխնոլոգիաներ, որակավորված և բանիմաց մասնագետներ, ընտանեկան ջերմություն և արդյունաբերական արտադրության ճշգրտություն: «Բեկոն Պրոդուկտ» ընկերությունը 24 տարի իրականացնում է վերամշակված մսամթերքի և կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք:

Ընկերությունն առաջատարն է վերամշակված մսամթերքի շուկայում և աչքի է ընկնում միջազգային չափանիշներին համապատասխան տեխնոլոգիաներով, սարքավորումներով և ստանդարտներով: Համաշխարհային սննդի արտադրության մի մասը կազմելով՝ «Բեկոն Պրոդուկտը» հայկական շուկայում հանդես է գալիս համաշխարհային գաստրոնոմ մշակույթի լավագույն օրինակներով՝ պատրաստված ինչպես ավանդական, այնպես էլ իտալական, իսպանական, գերմանական տեխնոլոգիաներով:

«Բեկոն Պրոդուկտ» ընկերությունն առանձնանում է որակի հանդեպ խստապահանջությամբ՝ սպառողին մատուցելով միայն բարձրակարգ և անվտանգ արտադրանք: Ընկերությունն աշխատում է ավստրիական և գերմանական սարքավորումներով, ISO 22 ստանդարտով: Գործունեության 24 տարիների ընթացքում բազմիցս արժանացել է մի շարք մրցանակների, որոնք հավաստում են սպառողի վստահության և բարձր գնահատականի մասին:





«ԲԱՆԴԻՎԱՆ ԿԱԹ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Կաթնամթերք սեփական ֆերմայից



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Բնական կաթնամթերքի արտադրության և տեղական բիզնեսի զարգացման լավագույն օրինակ» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Բանդիվան կաթ» ընկերությանը:

2017 թ. «Բանդիվան կաթ» ընկերությունը ներկայացրեց իր ապրանքատեսականին ամենօրյա համտեսի հնարավորությամբ: Այստեղ սպառողը փորձում է արտադրանքը, ինքնուրույն գնահատում ապրանքի որակը, ինչից հետո ինքն է որոշում գնել, թե՞ ոչ:

Ընկերությունում ամեն ինչ արվում է ի շահ սպառողի: Արտադրողն անկեղծ է և պատրաստակամ տեղեկություն տալ սպառողին իր ապրանքի մասին: Անսահմանափակ հյուրասիրությունն էլ հենց վկայում է արտադրողի որակյալ ապրանքի վստահելիության մասին: Իր որակի շնորհիվ «Բանդիվան կաթ» ընկերությունը միակն է Հայաստանում, որ պանիր է արտահանում Իսրայել:

2007 թ., երբ «Բանդիվան կաթ» ընկերության հիմնադիրը Շիրակի մարզի Բանդիվան գյուղում ստեղծում էր կովաբուծական ֆերմա և պանրի արտադրամաս, նրա նպատակը մեկն էր՝ ապահովել սպառողին բարձրակարգ ապրանքով՝ հողից մինչև սպառողի սեղան: Այդպես էլ եղավ:

Ընկերությունն իր սեփական հողատարածքներում աճեցնում է բացառապես բնական, առանց հավելումների անասնակեր, իսկ ժամանակակից սարքավորումներով հագեցած, մաքուր և կոկիկ ֆերմայում կաթնամթերքի ստեղծման բոլոր պայմաններն ապահովված են:

Հենց հարազատ գյուղում հիմնելով խոզաբուծական և կովաբուծական ֆերմաներ, կաթնամթերքի և պանրի արտադրություն՝ Կարապետյանների ընտանիքը տարածաշրջանում ապահովեց մեծաթիվ աշխատատեղեր: Համագյուղացիներին աշխատանքով ապահովելը նրանց գերխնդիրն էր: Եվ սա դեռ սկիզբն էր:

Խնոցու ախորժալի կարագ, անուշաբույր պանիրների լայն տեսականի պաստերիզացված կաթ, թթվասեր, կաթնաշոռ, մածուն. տեսականին մեծ է ու բազմազան՝ սպառողի քիմքին ու գրպանին հարմար, սպառողի համար:



«ՕՎԱԼ» ՊԼԱՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտը, անվրանգը, պրակտիկն ու մատչելին

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Վսրահելի ապրանքանիշ» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «ՕՎԱԼ» Պլաստիկ ՍՊԸ-ին:



Արագընթաց կյանքում ամենակարևորը ժամանակ չկորցնելն է, որն իր ընթացքին զուգահեռ թելադրում է նորը, անհրաժեշտը, պրակտիկն ու մատչելին: Հենց այս ճշմարտությամբ դեռևս քառորդ դար առաջ՝ 1995 թ., հիմնվեց «ՕՎԱԼ» Պլաստիկ ընկերությունը, որն իր սպառողին առաջարկում է պլաստիկե արտադրանքի շուրջ 500 ապրանքատեսակ: Արտադրանքի բազմազանությունը կարևոր է, բայց ամենակարևորը հումքն է, որը որակյալ է և անվտանգ առողջության համար:

Գործունեության ողջ ընթացքում արտադրանքի տեսականու բազմազանության և նորագույն տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ ընկերությունը դարձավ Հայաստանում միակը, իսկ ԱՊՀ տարածքում՝ խոշորագույնը:


Չնայած բնապահպանների անհանգստությանը՝ պլաստիկի թափոնն առհասարակ կարող է անվտանգ լինել, եթե այն հավաքվում է մինչև աղբի հետ խառնվելը, վերամշակվում և վերադարձվում է սպառողին:

Համագործակցելով Հայաստանյան տարբեր արտադրողների հետ՝ սննդամթերքի արտադրություն, բժշկություն, դեղագործություն, կենցաղային պարագաներ և այլն՝ «ՕՎԱԼ» Պլաստիկն առաջարկում է փաթեթավորման յուրատիպ մոտեցումներ՝ ապահովելով նաև տեսակավորված տպագրություն թեմատիկ, գունային ու պատկերային հետաքրքիր դիզայներական լուծումներով:

«ՕՎԱԼ» Պլաստիկի արտադրանքը մեծ պահանջարկ է վայելում նաև օտարերկրյա սպառողի կողմից, ինչի արդյունքում տարեցտարի ավելանում են արտահանման ծավալները, մասնավորապես՝ Ռուսաստան և Վրաստան:

Գործունեության ընթացքում ընկերության տնօրինությունն արժանացել է բազմաթիվ մրցանակների, պարգևների ու հուշամեդալների, այդ թվում՝ 2017-ին ՀՀ նախագահի հրամանով տնտեսության զարգացման գործում ներդրած ավանդի համար Վարուժան Խալաթյանը պարգևատրվել է Երախտագիտության մեդալով, 2019-ին՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության փոքր հուշամեդալով, ինչպես նաև արժանացել է Ռուսաստանի Դաշնության Որակի ակադեմիայի «Երկրի դեմքը» մրցանակին, որը հանձնել է Որակի համառուսաստանյան կազմակերպության նախագահ, տնտեսագիտական և տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գենադիյ Վորոնինը:





«ԴԻԼԻՋԱՆ ԳԱՐԵՋՈՒՐ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ճաշակի սպառողի ուրամադրության գրավական



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Համաժողովրդական գարեջուր» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «ԴԻԼԻՋԱՆ ԳԱՐԵՋՈՒՐ» ընկերությանը:

Դեռևս 2011 թ. ծնունդ առած գաղափարն օր-օրի զարգանում էր, հասունանում. պետք էր ստեղծել նոր համ, նոր որակ՝ գարեջուր յուրաքանչյուր սպառողի քիմքին համապատասխան: Ու միայն 2016-ին Դիլիջան քաղաքում ստեղծվեց Դիլիջան գարեջրի գործարանը՝ առաջարկելով ըմպելիքի սիրահարներին 6 տեսակի գարեջուր՝ Դիլիջան 0 ոչ ալկոհոլային, Դիլիջան 1 դասական, Դիլիջան 2 օրիգինալ, Դիլիջան 3 ցորենի, Դիլիջան 4 մուգ և Դիլիջան 5 դառնահամ: Որոշ ժամանակ անց տեսականին համալրվեց ևս 3՝ Դասական, կիտրոնի և դեղձի համերով ոչ ալկոհոլային գարեջրային ըմպելիքներով:

Բացառապես բնական հումքով և դասական եղանակով պատրաստվող գարեջուրն անցնում է եփման, խմորման ու հնացման տեխնոլոգիական գործընթացները: Կախված գարեջրի տեսակից՝ պահանջվում է 30-40 օր, որպեսզի փրփրուն ըմպելիքը պատրաստ լինի: Եվրոպական առաջատար ընկերությունների կողմից արտադրված սարքավորումներով իրականացվող արտադրման գործընթացում նվազագույնի է հասցվում մարդկային գործոնը:

Արդեն երկու տարի Դիլիջան գարեջուրը սիրելի է նաև Ռուսաստանի Դաշնության, Միացյալ Նահանգների, Բելգիայի, Լեհաստանի և Չինաստանի սպառողներին: Իսկ ոչ ալկոհոլային գարեջրային ըմպելիքները շուտով կարտահանվեն նաև Մերձավոր Արևելքի երկրներ:

Ընկերությունում ներդրված է որակի վերահսկման միջազգային համակարգ: Գարեջուրը մշտապես ստուգվում ու ենթարկվում է համապատասխան լաբորատոր փորձաքննության՝ ապահովելով բարձրորակ և ստանդարտացված արտադրանք:

Ընկերությունն արժանացել է ISO, HACCP և HALAL համապատասխանության սերտիֆիկատներին, իսկ միջազգային պատվավոր ստուգատեսներում բազմիցս պարգևատրվել է ոսկե մեդալներով և պատվոգրերով:





«ԵՐԵՄՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Հայկական խոհարարական արվեստում նոր մշակույթի ներդրում. սպասարկման ոլորտի առաջատար» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Երեմյան Փրոջեքթս» ընկերությանը:



«Պանդոկ Երևան» ռեստորանների ցանցը մշտապես ձգտում է ներկայացնել իրական համով Հայաստանը: Կարևորելով ազգային խոհանոցի և խոհարարական ավանդույթների պահպանումը՝ «Պանդոկ Երևանը» ներկայացնում է ազգային խոհանոցի ավանդական և սիրված ուտեստների բազմազան բաղադրատոմսերը:

Հայաստանի տարբեր տարածաշրջաններ պարբերաբար այցերի, ուսումնասիրությունների արդյունքում է ձևավորվել «Պանդոկ Երևանի» ճաշացանկը, որի միջոցով փոխանցվում են պատրաստման մշակույթն ու բաղադրատոմսերը:

«Լավաշ» ռեստորան

2017-ի ապրիլին, Թումանյան 21 հասցեում բացված «Լավաշը» դարձավ «Երեմյան Փրոջեքթսի» երրորդ բիզնես նախաձեռնությունը, որի ստեղծման հիմքում ներդաշնակ հակադրություններով կոլորիտի ձևավորումն է. վինտաժային դիզայնով ռեստորանում հայկական խոհանոցը մատուցվեց նոր շնչով՝ միաժամանակ պահպանելով նախորդ ռեստորաններից ժառանգած փորձն այն մասին, որ հայկական խոհանոցը մշտապես պետք է մնա ամենապահանջվածն ու սիրվածը: «Լավաշի» գործունեության առանցքում է մոռացված հայկական բրդուճային նախաճաշի վերականգնումն ու առավոտյան սնվելու գեղեցիկ մշակույթի տարածումը:



«Շերեփ» ռեստորան

Ամիրյան 1 հասցեում գտնվող «Շերեփ» ռեստորանը յուրօրինակ վայր է մայրաքաղաքի սրտում: «Շերեփի» խոհանոցը չունի ազգային պատկանելիություն կամ շեշտադրում և առաջարկում է տարբեր երկրների խոհանոցներից ամենահետաքրքիր ուտեստները: Ռեստորանի կարևոր առանձնահատկություններից է մեծ ու բաց խոհանոցը, որն առաջինն է Հայաստանում. այստեղ հաճախորդը հնարավորություն ունի հետևելու յուրաքանչյուր ուտեստի համի, գույնի և բույրի ստեղծման ողջ գործընթացին, ծանոթանալու խոհարարական արվեստին:

«Սմոքինգ Շեֆ»

2019-ի մայիսից «Երեմյան Փրոջեքթս» ընկերությունն իր ռեստորանների ցանցը համալրեց ևս մեկ՝ Smoking Chef Grill & Wine ռեստորանով: Սա «մի գավաթ միս, մի կտոր գինի» կարգախոսով ժամանակակից սթեյք հաուս է, որը ներկայանում է եվրոպական խոհանոցով, հնացված և ծխեցված մսից պատրաստված ուտեստների հարուստ ճաշացանկով: Ռեստորանը գտնվում է Սարյան-Պուշկին փողոցների խաչմերուկում և Երևանի լավագույն սթեյք հաուսներից է:

«Լիվինգսթոն» ռեստորան

2019-ի հոկտեմբերի 4-ին մեկնարկեց «Երեմյան Փրոջեքթս» ընկերության նոր նախագիծը՝ «Լիվինգսթոն» ռեստորանը, որն ընկերության 10-րդ նախագիծն է: Սա նոր ձևաչափով բարձրակարգ կոնցեպտուալ ռեստորան է Մարզահամերգային համալիրի շենքի 9-րդ հարկում: Հյուրերին առաջարկում է ինչպես եվրոպական բարձր ֆյուժն, այնպես էլ մոլեկուլյար խոհանոց՝ ծանոթացնելով խոհանոցային բարձր մշակույթին: Այստեղ ներկայացված են յուրօրինակ, նաև հեղինակային ճաշատեսակներ՝ ընձեռելով նոր համեր բացահայտելու հնարավորություն:

Առանձնահատուկ է նաև ռեստորանի երաժշտական ձևաչափը: Մինչև 23:00-ը «Լիվինգսթոնի» նվագախումբը ներկայացնում է 1960-70-ականների ամենահայտնի ստեղծագործությունները, իսկ հետո հնչում են ժամանակակից ակումբային ռիթմեր հայտնի դիջեյների և բենդերի կատարմամբ: Այստեղ ստեղծված է ամեն բան, որպեսզի հյուրերը շրջապատված լինեն բարձրաճաշակ մշակույթով և շքեղությամբ:

«ՎԻ-ԷԼ-ՎԻ» ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑ

Ձեր կենցաղում, ձեր կողքին
Տեխնիկա բոլորի համար



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Դինամիկ աճ և կայուն որակ» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «ՎԻ-ԷԼ-ՎԻ» էլեկտրատեխնիկայի խանութների ցանցին:

2001 թ. Վաղինակ Հովհաննիսյանի նախաձեռնությամբ Մալաթիա տոնավաճառում բացվեց կենցաղային տեխնիկայի խանութ, որն առաջինն էր տոնավաճառում: 2004-ին դժվարին փորձություններից հետո փոքրիկ ձեռնարկատիրությունից ձևավորվեց ՎԻ-ԷԼ-ՎԻ-ն՝ այսօր արդեն ամենախոշոր, կենցաղային էլեկտրասարքավորումներ ներկրող ընկերությունը:

Քչով բավարարվելը Հովհաննիսյանների ընտանիքի համար չէ: Շուտով մեկ խանութն ու հիսունից ավելի աշխատատեղերը վերածվեցին 800 ապրանքատեսակ, 600-ից ավելի ապրանքանիշ, վերապատրաստված անձնակազմ և 264 աշխատակից ունեցող մի մեծ ընտանիքի:

Բոլոր խանութները հագեցած են ամենաորակյալ, նորագույն սարքավորումներով, բազմազան ապրանքանիշերով: Ժամանակի ընթացքում ձևավորված պահանջարկի կոչով հիմնադիրները հարկ համարեցին գործունեություն ծավալել նաև մարզերում, ինչի արդյունքում Գյումրիում, Աբովյանում, Էջմիածնում, Հրազդանում, Արցախում, Սևանում և այլուր սպառողը կարողացավ ձեռք բերել որակյալ տեխնիկա: ՎԻ-ԷԼ-ՎԻ-ի նպատակն է հասանելի լինել բոլոր մարզերում՝ ստեղծելով նոր աշխատատեղեր և, ինչն առավել կարևոր է, հաճախորդներին առաջարկել որակյալ տեխնիկա:

Իրենց ապրանքանիշերը ներկայացնելու բացառիկ հնարավորությունը ՎԻ-ԷԼ-ՎԻ-ին են վստահել աշխարհահռչակ ՀԱՅՍԵՆՍ, ՍՈՆԻ, ԴԵԼՈՆԳԻ, ՍԱՄՍՈՒՆԳ և այլ խոշոր ընկերություններ: Ընկերությունը հանդես է գալիս նաև ՎԻԿԱՍ սեփական ապրանքանիշով:

Ապրանքների մատուցման գրագիտություն և բազմազանություն, անհատական մոտեցում յուրաքանչյուր հաճախորդին, կուտակային քարտեր և զեղչային ճկուն համակարգ, ավտոմեքենայի ամենամսյա խաղարկություն, անվտանգ առաքում. ահա այն ամենը, ինչ ունի սպառողը ՎԻ-ԷԼ-ՎԻ-ի շնորհիվ:





«ՀԵԼԻՈՍ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Շնորհակալ եմ քեզ, Հելիոս,
քեզ հետ ես ինքնավստահ եմ, առողջ, գեղեցիկ և երիտասարդ

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Առողջապահության ոլորտում մաշկաբանության և էսթետիկ բժշկության ինովացիոն կենտրոն» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Հելիոս» բժշկական կենտրոնին:



«Հելիոսը» շուրջ 2 տասնամյակ հավատարիմ է իր որդեգրած քաղաքականությանը՝ մասնագիտական և սպասարկման բարձր որակ, ինովացիոն մոտեցումներ, առաջադեմ սարքավորումներ, հոգատար անձնակազմ:

Կլինիկական բժշկություն

Փորձառու և վստահելի բժիշկներ՝ մաշկաբան, թերապևտ, գինեկոլոգ, ինչպես նաև ապարատային հետազոտություններ՝ ԷԿԳ, ՈՒՁՀ, ՄԻԼ:

Ախտորոշիչ լաբորատորիա

Կլինիկական, բիոքիմիական, իմունոլոգիական հետազոտություններ:

Ճշգրիտ հետազոտություններն արդյունավետ բուժման գրավականն են: «Հելիոս» լաբորատորիան տրամադրում է նաև ստուգիչ թեստեր:

Էսթետիկ բժշկություն

Ուրվագծային պլաստիկա, կոպերի ոչ վիրահատական շտկում, պլազմոթերապիա, փիլինգ, խնամքներ, տրիխոլոգիա, լազերային մազահեռացում:

Ինովացիոն մոտեցում, վերջին սերնդի սարքավորումներ, վերապատրաստված մասնագետներ, բարձրակարգ բրենդային նյութեր:

Սպա

Մարմնի մոդելավորում, թայլանդական, չինական մերսում՝ անմո, գուաշա, ցիգուն, մարմնի պարուրում, փիլինգ, հիդրոխնամք: Մի խոսքով՝ մարմնի և հոգու ներդաշնակություն:

Նշենք նաև առողջապահության ոլորտում «Հելիոսի» ունեցած մաշկաբանական, գիտական ներդրումների, մաշկաբանության ոլորտում մասնագետների միջազգային վերապատրաստումների և հիմնադիր, գլխավոր բժիշկ, մաշկաբան Հելեն Ազարյանի գրանցած 2 գյուտերի մասին:

«Հելիոսը» Հերացու անվան բժշկական համալսարանի մաշկաբանության հենակետային գիտահետազոտական կենտրոնն է՝ կրթական խոստումնալից ծրագրերով:





ՎԱԼԱՆ ԳՐՈՒՊ ընկերություն

Միշտ մեկ քայլ առաջ դեպի նոր տեսլականներ, նոր գաղափարներ




Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «ՀՀ քաղաքաշինության ոլորտում նոր ոճ և յուրօրինակ դիզայն» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Վալան Գրուպ» ընկերությանը:

Ժամանակի ու որակի պահանջներից, ոճային, դիզայներական լուծումներից միշտ մեկ քայլ առաջ լինելը «Վալան Գրուպ» ընկերության դիմագիծն է: Ստեղծման առաջին օրից՝ 2001 թ.-ից, հայրենական շուկայում ճանաչված և հեղինակավոր ընկերությունն աչքի է ընկնում կառուցողական աշխատելաոճով, կազմակերպչական բացառիկ ջիղով: Իսկ որակի հանդեպ խստապահանջությունն ու բարեխղճությունը մշտապես բարձր են գնահատվում բազմահազար սպառողների ու գործընկերների կողմից:

Համագործակցելով բացառապես միջազգային առաջատար ընկերությունների հետ, հանդիսանալով շատերի պաշտոնական ներկայացուցիչը մեր երկրում և տարածաշրջանում՝ «Վալան Պրոֆը» բավարարում է ամենատարբեր, ինքնատիպ նախասիրություններ և ճաշակ ունեցող սպառողների խստապահանջությունը: Հնարավոր չէ նշել ընկերության արտադրանքն իր ողջ ծավալով, քանզի այստեղ ամբողջանում է բնակարանային ու հարակից տարածքների ամբողջական պատկերը: Իսկ 2009 թ. «Վալան Դեկոր» պաստառների մասնագիտացած խանութ-սրահի բացումով սպառողին հնարավորություն տրվեց սեփական տանն ունենալու աշխարհահռչակ ընկերությունների կողմից առաջարկվող պաստառները, դեկորատիվ ներկերն ու ֆոտոպաստառները:

«Վալան Գրուպի» գործունեությունը տարեցտարի դառնում է ավելի ամբողջական ու լիարժեք: 2013-ին ընկերության առաջարկներին ավելացավ ևս մեկը՝ պենոպլաստե դեկորատիվ քիվերի, ջահերը շրջագծող դեկորների արտադրություն DecoStar ապրանքանիշով: Հավատարիմ «Վալան Գրուպի» ավանդույթներին՝ DecoStar-ը ևս սպառողին առաջարկում է բարձրորակ արտադրանք՝ պատրաստված էկոլոգիապես մաքուր, բացառապես անվտանգ գերմանական BASF ընկերության հումքից:





ՊՌՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Հաճի և որակի ազգային չափանիշ» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ին:



Պռոշյանի կոնյակի գործարանի արտադրանքի համն ու բույրը վաղուց փնտրված են ոգելից խմիչքների որակը գնահատողների կողմից: Այսօր արդեն պահանջված ու սիրված է նաև Պռոշյանի կոնյակի գործարանի հայկական ավանդական բաղադրատոմսերով պատրաստված «Ռոյալ» ապրանքանիշով պահածոների տեսականին:

Արտադրությունը սկսելով պահածոյի ընդամենը 4-5 տեսակից՝ տարեցտարի տեսականին բազմազան դարձավ: Պահածոյացման ավանդույթներին հավատարիմ, հայ սպառողի քիմքին ու ճաշակին համապատասխան բանջարեղենով ու համեմունքներով պատրաստված պահածոները կարճ ժամանակում սիրվեցին սպառողի կողմից՝ դառնալով հայկական սեղանի անբաժան մասը: Հիմա «Ռոյալ» ապրանքանիշով պահածոների տեսականին մոտ վեց տասնյակ է: Կոմպոտներ, մուրաբաներ, մարինադներ, բանջարեղենային տարբեր պահածոներ և, իհարկե, հայկական ընտանիքներում ամենասիրված սմբուկի խավիարը, որը 2016 թ. արժանացել է «Տարվա ավանդական սմբուկի խավիար» անվանակարգին:

Հայկական հողից ստացված բանջարեղենից ու մրգերից պատրաստված «Ռոյալ» ապրանքանիշով պահածոներն անցնում են բարձր ջերմային ստերիլիզացման ճանապարհ:

Պահածոները մեծ պահանջարկ են վայելում նաև արտասահմանյան շուկայում: Տեսականին արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, Միացյալ Նահանգներ, եվրոպական և Մերձբալթյան երկրներ, Ղազախստան:

Պռոշյանի կոնյակի գործարանի «Ռոյալ» ապրանքանիշով պահածոներ՝ գործարանային որակ, ավանդական համ ու հոտ:





ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱԼՐԱՂԱՑ ԳՈՐԾԱՐԱՆ

Հոգատար վերաբերմունք, ժամանակակից տեխնոլոգիաներ, բարձրակարգ և որակյալ ալյուր:



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Բարձրորակ ալյուր. թիվ մեկ պահանջարկ» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Բաղրամյան ալրաղաց գործարան» ՍՊԸ-ին:

Տարիներ շարունակ Բաղրամյանի ալյուրի շնորհիվ հայկական խոհանոցներում ու արտադրամասերում լավաշը փրփրուն, հացն անուշաբույր, հրուշակեղենն էլ ախորժալի և դյուրամարս են:

Հանրապետությունում սպառվող ալյուրի ծավալի 50 տոկոսն ապահովող Բաղրամյանի ալրաղաց գործարանի աշխատանքի հիմքում մարդկային գործոնն է՝ հոգատար վերաբերմունքը դեպի սպառողը: Գործունեության առաջին օրերին որդեգրած սկզբունքին հավատարիմ՝ այստեղ արտադրվում է բացառապես առանց սննդային հավելումների, վիտամինների և քիմիական տարրերի ալյուր: Սպառողը պետք է գոհ մնա:

Գործարանում արտադրական տեխնոլոգիաները տարեցտարի դառնում են ավելի ժամանակակից: Հումքի՝ ցորենի մթերումից մինչև պատրաստի ալյուր ստանալն իրականացվում է վերջին սերնդի սարքավորումներով:

Բաղրամյանի ալրաղացը լուծում է նաև աշխատատեղերի խնդիր. գործարանի հարակից գյուղերի շուրջ 330 բնակիչներ քաջ գիտակցում են՝ ինչ էլ պատահի, ունեն աշխատանք:

35-ամյա պատմության ընթացքում Բաղրամյանի ալրաղաց գործարանը, շնորհիվ բարձրորակ արտադրանքի, մշտապես առաջատար դիրք է զբաղեցրել ալյուրի արտադրության ոլորտում՝ արժանանալով բարձր գնահատականի, վայելելով բարեխիղճ արտադրողի պիտակը:





ԵՐԵՎԱՆԻ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Աշխարհին ներկայանալու գիտական հայոց այցեքարտը

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «ՀՀ գիտական մտքի պատվիրակ միջազգային ասպարեզում» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ին:



Ուսուցում, հետազոտություն, գիտական մտքի թռիչք... Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտում գիտական կյանքը եռուն է՝ կենցաղայինից մինչև ռազմական, ռադարային տեխնիկայի նախագծում, ռոբոտատեխնիկա և նույնիսկ խամաճիկների թատրոնի տեխնիկական մշակում: Ամենուր և ամեն տեղ կապի միջոցների ինստիտուտի գիտական կյանքի արդյունքներն են: Ինստիտուտ, որտեղ զարգացումը մեկ չափանիշ ունի՝ ոչ թե ամբողջ էներգիան ուղղել ունեցածի պահպանմանը, այլ ունեցածը պահպանել՝ անընդհատ ավելացնելով նորը, արդիականը, դեռևս գոյություն չունեցողը:

Ինստիտուտում զբաղված են բոլորը: Նախագծերը տարբեր են, պատվերները՝ բազում, իսկ նոր գաղափարները համբերատար սպասում են իրենց հերթին: Այսօր ինստիտուտը կենտրոնացած է կապի միջոցների, ռադիոլոկացիոն համակարգերի և տեխնոլոգիական գործընթացների ավտոմատացված համակարգերի նախագծման և պատրաստման ուղղությունների վրա: Թողարկում է նաև լայն սպառման այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են կանչի համակարգերը, լուսադիոդային լուսատուները, ազդարարները, կոնֆերենց համակարգերը, համացանցի օգտագործման կապի սարքերը:

Բարձր որակավորում ունեցող մասնագետների շնորհիվ՝ լուծվում են ժամանակակից գիտատեխնիկական խնդիրներ: Գիտական հզոր մտքի շնորհիվ՝ Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտը պատվով է ծառայում հայրենիքին՝ ամրացնելով նրա սահմանները ճկուն ու նորարար լուծումներ ունեցող տեխնիկայով: Ինստիտուտը սերտորեն համագործակցում է նաև Արցախի Հանրապետության հետ՝ գրանցելով կարևոր արդյունքներ:

Մինչև օրս ռազմական արդյունաբերության մեջ մշակվել ու կիրառվել են առանցքային դեր ունեցող բազմաթիվ նախագծեր: Կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտում համեստ մթնոլորտ է, որից ծնված նախագծերի հզոր զարկը լսելի է աշխարհի տարբեր ծայրերում: Սերտ համագործակցում են Լիտվայի, Միացյալ Արաբական Էմիրությունների, ինչպես նաև Չինաստանի տարբեր ձեռնարկությունների հետ:





«ՀԵԼԻՈՍ ՊՈԴՈԼՈԳԻԱ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Թողեք ձեր առողջ հետքը



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Առողջապահության ոլորտում ուրնաթաթի և եղունգների ախտաբանությունների կանխարգելման, բուժման և ինամքի առաջատար կենտրոն» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Հելիոս Պոդոլոգիա» բժշկական կենտրոնին:

«Հելիոս Պոդոլոգիա» բժշկական կենտրոնը ոչ միայն «Հելիոսի», այլև Հայաստանում առողջապահության ոլորտի ձեռքբերումն է, առաջիններից, որ տրամադրում է ոտնաթաթի և եղունգների տարատեսակ հիվանդությունների բուժմանն ու կանխարգելմանն ուղղված մասնագիտացված բարձրակարգ ծառայություններ, այդ թվում.


- *սնկային և դեֆորմացված եղունգների ախտորոշում և բուժում (5 և ավել մեթոդ),*
- *ներաճած եղունգների կանխարգելում/բուժում (10 և ավել մեթոդ),*
- *դիաբետիկ ոտնաթաթի խնամք, կոշտուկ, գորտնուկ,*
- *եղունգի պրոթեզավորում,*
- *հարթաթաթության, կոճի, ոտնաթաթի դեֆորմացիաների կանխարգելում և բուժում,*
- *բժշկական/ապարատային ոտնահարդարում,*
- *էսթետիկ մատնահարդարում, ոտնահարդարում:*

Կենտրոնի փորձառու մասնագետները մշտապես կատարելագործում են իրենց մասնագիտական հմտություններն ու կարողությունները արտերկրում, ոլորտի առաջատար ընկերություններում: Բացառիկ է, բայց կենտրոնի բոլոր պոդոլոգ մասնագետները բժիշկներ են՝ մաշկաբաններ, էնդոկրինոլոգներ:

Վերջին սերնդի սարքավորումներ, միջազգային չափորոշիչներին համապատասխանող ախտահանման տեխնիկա, բարձրակարգ նյութեր և տրամադրող միջավայր:

«Հելիոս Պոդոլոգիան» արժանացել է այցելուի վստահությանը: Հաջորդ քայլն էր Պոդոլոգների հայկական ասոցիացիայի հիմնադրումը, Հայաստանում ոտնաթաթի բժշկական խնամքին մասնագիտական մոտեցումը: Ասոցիացիան ստեղծվել է կրթելու, վերապատրաստելու համար նոր մասնագետների, ինչպես նաև վերահսկելու ոլորտի հնարավոր և անհնար բոլոր վտանգները/սպառնալիքները:

Մասնագիտացած կենտրոն, որ միջազգային նորարար փորձի ծնունդ է, թելադրում է իր կանոններն ու հավատարիմ է իր մշակած ռազմավարությանը:





«ՌՈՅԱԼ ԱՐՄԵՆԻԱ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Բարձր տրամադրության և էներգիայի արքայական չափաբաժին

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Ռոյալ Արմենիա բրենդի միջազգայնացում և տնտեսության զարգացման առաջամարտիկ» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Ռոյալ Արմենիա» ՀՁ ՍՊԸ-ին:



Արդեն ավելի քան երկու տասնամյակ կանաչ սուրճի վերամշակմամբ և փաթեթավորմամբ զբաղվող «Ռոյալ Արմենիա» ընկերությունը սպառողին ներկայանում է սուրճի տարբեր համերի ու բույրերի լայն տեսականիով: Հատիկավոր սուրճի ընտրանին, արաբիկա և ռոբուստա տեսակի լավագույն հատիկներից ստացված աղացած սուրճը, 100 % բնական լուծվող սուբլիմացված RA սուրճը կարճ ժամանակում դարձան սուրճի սիրահարների՝ առավոտը լավագույնս դիմավորելու գրավականն ու օրվա էներգիայի չափաբաժինը: Իսկ 3-ը 1-ում լուծվող սրձային ըմպելիքի 3 տեսակները՝ «Կլասիկ», «Փափուկ» և «Թունդ», լուծվող տաք շոկոլադե ըմպելիքը, տարբեր համերով թեյերը սիրվեցին մեծ ու փոքրիկ սպառողների կողմից:

Սուրճի հատիկների ընտրությունից մինչև տեսակավորումը, բովման և աղացման գործընթացից մինչև յուրատիպ համային փնջերի ստեղծումը և փաթեթավորումը «Ռոյալ Արմենիայում» իրականացվում են առանձնակի հոգատարությամբ և պատասխանատվությամբ, քանզի այստեղ կարևորում են սեփական արտադրանքի ինչպես համն ու բույրը, այնպես էլ բարձր որակը, օգտագործման հարմարավետությունն ու էսթետիկ գրավչությունը: Ժամանակակից փաթեթավորումը թույլ է տալիս սուրճի անկրկնելի բույրը և թարմությունն ապահովել իրացման ողջ ընթացքում:

Հարավային Ամերիկայից, Ասիայից և Եվրոպական երկրներից ներկրվող բարձրորակ հումքի, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և ընկերության սիրով ու պատրաստակամ աշխատանքի շնորհիվ՝ «Ռոյալ Արմենիայի» արտադրանքն արժանացել է սննդի անվտանգության բազում հավաստագրերի, «Ոսկյա պարգև բիզնեսի հեղինակության բարձրացմանն ուղղված գերազանցության համար» և «Որակի և տեխնոլոգիայի եվրոպական կամար՝ պլատինե աստիճան» միջազգային, ինչպես նաև տեղական պարգևների:

«Ռոյալ Արմենիայի» տեսականին սիրված ու պահանջված է ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, Ուկրաինայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում:





EcoSense «ԷԿՈՍԵՆՍ» ԱԽՏՈՐԵԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Լաբորատոր հետազոտությունների երաշխավորված արդյունք



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Միավորման կենտրոնների առաջատար ցանց» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Էկոսենս» ախտորոշման կենտրոնին:

Միջազգային չափանիշներին համապատասխան հետազոտություններ, ժամանակակից տեխնոլոգիական ձեռքբերումների կիրառում գործնականում, ճշգրիտ արդյունք: Սա է ի սկզբանե «Էկոսենս» բժշկական լաբորատորիայի տնօրինության և աշխատակազմի որդեգրած սկզբունքը, որին հավատարիմ՝ լաբորատորիան գործում և իր սպառողին սպասարկում է արդեն տասը տարի:

Հետազոտությունների ծավալով և որակով Հայաստանում առաջատար «Էկոսենսում» հետազոտությունները կատարվում են աշխարհի լավագույն լաբորատոր սարքավորումներով, որոնք թույլ են տալիս հրատապ իրականացնել բիոլոգիական նմուշների հետազոտությունների մեծ ծավալ ամենաբարձր որակով:

«Էկոսենսի» երևանյան չորս և մարզային վեց մասնաճյուղերը համագործակցում են մայրաքաղաքի և մարզերի առաջատար բժշկական կենտրոնների, կլինիկաների և մասնավոր պրակտիկայով զբաղվող բժիշկների հետ: Կլինիկայում գործում են առողջության ընդհանուր ստուգման և տարբեր ուղղություններով մոնիթորինգի Check-up ծրագրեր: Գործընթացի ավտոմատացման շնորհիվ՝ լաբորատորիայում նվազագույնի է հասցվում մարդկային գործոնը՝ երաշխավորելով առավելագույն ճշգրտություն և հուսալիություն:

Լաբորատորիայում իրականացվում են նաև համալիր բժշկական ծառայություններ, այդ թվում՝ ընդունելություն տարբեր մասնագիտացում ունեցող բժիշկների մոտ:





«ՄԵՂՐՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ» ՍՊԸ

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Միջպետական և տեղական ճանապարհների, ոռոգմավարական կառույցների առաջատար կառուցապատող» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Մեղրու ՃՇՃՁ» ՍՊԸ-ին:



Մեղրու՝ հանրապետության հարավային դարպասի ճանապարհները պետք է լինեն բարեկարգ, տարածաշրջանային, մարզային, միջպետական և տեղական ավտոճանապարհները՝ ասֆալտապատ: Սա նպատակ է, որ որդեգրել է Մեղրու Ճանապարհաշինարարական և շահագործման ձեռնարկության ղեկավարությունն ու արդեն 35 տարի հավատարիմ իր սկզբունքներին կառուցում և շենացնում է ճանապարհներն ու հարակից տարածքները: Բայց կառուցելն աշխատանքի ավարտը չէ. կառուցածը պետք է կարողանալ նաև պահպանել:

Մեղրու Ճանշինի աշխատանքները շատ են ու կարևոր, առավել նշանակալիները՝ առավել հիշվող: Ընկերության ամենանշանավոր կառույցներից մեկը եղավ 2005-2007 թթ. կառուցված Կապան-Ծավ-Շվանիձոր-Մեղրի այլընտրանքային ճանապարհահատվածի 28 կմ-ը՝ կառուցված Արաքս գետի հաշվին: Այժմ էլ ընկերության աշխատանքները բուռն ընթացքի մեջ են. իրականացվում են Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-հայ-իրանական սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Կազմակերպությունը ստանձնել է բազմաթիվ պարտականություններ՝ հասարակական-քաղաքացիական շենքշինություններից մինչև կամուրջների կառուցում և վերակառուցում, զորամասերի կառուցում, իսկ Մեղրու բժշկական կենտրոնը մինչև օրս թերևս կլիներ նույն անմխիթար վիճակում, եթե ընկերությունը չհայտներ իր պատրաստակամությունը նոր կյանք տալու բուժհաստատությանը: Ընկերության կողմից կատարվում են նաև հիդրոտեխնիկական աշխատանքներ մարզի բոլոր բնակավայրերում, իրականացվում՝ ոռոգելի ինքնահոս ջրի վերակառուցում:

Մեղրու ճանապարհաշինարարական ընկերության գործունեությունը գնահատվում է ինչպես տեղական պատկան մարմինների, սպառողի, այնպես էլ միջազգային կառույցների կողմից. վերջերս կազմակերպությունն արժանացավ միջազգային ISO 9001:2015 հավաստագրի՝ հնարավորություն ստանալով գործունեություն ծավալելու Եվրամիության և ԱՊՀ ավելի քան քառասուն երկրում:

Շնորհիվ Մեղրու Ճանապարհաշինարարական և շահագործման ձեռնարկության՝ բարեկարգված ու հիմնանորոգված, վստահելի և մշտապես պահպանվող են Մեղրու միջհամայնքային, հայ-իրանական միջպետական նշանակության ճանապարհները:





ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Բարձրակարգ բուժսպասարկում և սոցիալական պատասխանատվությամբ բժշկական կենտրոն» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին:

Փոխվում են ժամանակները, փոխվում է նաև Ալավերդու բժշկական կենտրոնը: Տասնամյակների պատմություն ունեցող բուժհաստատությունն ամեն տարի իր սպառողին է ներկայանում նոր ծառայություններով ու նոր սարքավորումներով: Այն համալրվում է նոր մասնագետներով, իսկ վերապատրաստումները հնարավորություն են տալիս բուժկենտրոնի բժիշկներին իրենց հիվանդներին սպասարկել բժշկության ժամանակակից մեթոդներով:

Վերջերս կենտրոնն իր սարքավորումները համալրեց Լապարասկոպիկ վիրաբուժական գործիքների հավաքածուով, անզգայացման սարքով, մամոգրաֆով և այլն: Իսկ Ուազ մակնիշի ամենագնացը բավականին կհեշտացնի ու կարագացնի հիվանդի սպասարկման գործընթացը:

Ալավերդու բժշկական կենտրոնի ղեկավարությունն ու բուժանձնակազմը հետևողական են բնակչության առողջության պահպանման հարցում: Վերջերս որոշ հիվանդությունների դեպքում գործի է դրվել նաև շարունակական բուժման մեխանիզմը:

Կենտրոնում քաջ գիտակցում են համաշխարհային առողջապահության մեջ ժամանակակից մեթոդների կարևորությունը, ուստի արդեն քայլեր են արվում ISO 9001:2015 որակի ներդրման սերտիֆիկատի ձեռքբերման ուղղությամբ:

Ալավերդու բժշկական կենտրոնի բուժանձնակազմը, հետևողական լինելով սարքավորումներով ու բուժսպասարկման համար անհրաժեշտ տեխնիկայով վերազինմանը, սանիտարահիգիենիկ նորմերի պահպանմանը, բուժաշխատողների արդյունավետ աշխատանքին, վայելելով տարածաշրջանի բնակչության վստահությունը, հավատում է բուժկենտրոնի լուսավոր վաղվա օրվան, հաջողություններին և սպառողին առավել օգտակար լինելու հնարավորությանը:





ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔ

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Համապատասխան զարգացող համայնքի լավագույն օրինակ» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել Քասախի համայնքապետ Արա Մկրտչյանին:



Քասախ համայնքի բնութագրիչը կայուն զարգացումն է: Նշանակալից առաջընթաց գրանցած համայնքն օր-օրի փոխում է իր դիմագիծը: Համայնք, որտեղ ամենուր նոր շինություններ են ու էլի շինարարություն: Այստեղ նորն արարելու աշխատանքները կանգ չեն առնում:

Քասախում գործող նորակառույց բարձրակարգ մշակութային դպրոց-ստուդիայում շուրջ 360 երեխա ստանում է երաժշտական, թատերական և մշակութային կրթություն:

Համայնքում արդեն ավարտվել են Քասախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի շինաշխատանքները, որտեղ համայնքի պատանիներն ու երիտասարդները հնարավորություն կունենան ստանալու ժամանակի պահանջներին համահունչ կրթություն SS ոլորտում:

Վերանորոգման աշխատանքներ են տարվում մանկապարտեզում: Շուտով ամբողջությամբ նոր, կահավորված, ժամանակի պահանջներին համապատասխան կառույցում նախադպրոցական կրթություն կստանան համայնքի 160 ընտանիքների 3-6 տարեկան շուրջ 225 երեխաներ:

Քասախի հիմնական փողոցներն ասֆալտապատ են: Հիմա հերթը նոր ճանապարհներինն է: Հատկապես երիտասարդ բնակիչների սիրելի վայրն է դարձել վերջերս կառուցված հեծանվուղին: Իսկ առաջիկա ասֆալտապատման խոշոր ծրագրերից մեկն էլ կկրճատի մայրաքաղաք հասնելու համար անհրաժեշտ ժամանակը:

Առջևում նոր ծրագրերն ու աշխատանքներն են: Քասախն ապրում ու զարգանում է ներկայի նկատմամբ հավատով ու ապագայի լուսավոր տեսլականով:





Սպառողների ազգային ասոցիացիայի Աբովյանի մասնաճյուղ



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ սպառողների իրավունքների խնդիրներին արագ արձագանքելու և բարեխիղճ աշխատանքի համար պարգևոգիր է շնորհվել Սպառողների ազգային ասոցիացիայի Աբովյանի մասնաճյուղի նախագահ Գեորգի Հակոբյանին:

1990-ականներից Հայաստանում սպառողական շարժման հիմնադիր Սպառողների ազգային ասոցիացիան սպառողներին առավել հասանելի լինելու, նրանց խնդիրներին արագորեն արձագանքելու նպատակով 1997 թվականից սկսել է հիմնադրել մասնաճյուղեր Հայաստանի բոլոր մարզերում: Այդ մասնաճյուղերը հետագայում դարձել են մարզային կառույցներ՝ իրենց մասնաճյուղերով:

2002 թ.-ից մարզային մի քանի կառույցներ իրենց գործունեությունը շարունակում են որպես ասոցիացիաներ:

Հրազդանի մասնաճյուղը, որ սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվում է 1997-ից, այսօր հանդես է գալիս որպես առանձին կառույց իր մասնաճյուղերով: Դրանցից մեկը՝ Գեորգի Հակոբյանի ղեկավարությամբ գործող Աբովյանի մասնաճյուղը, առավել աչքի է ընկնում իր պարտավորությունների լիարժեք կատարմամբ, սպառողների խնդիրներին հրատապ արձագանքելով ու ամբողջական լուծում տալով: Նաև ամուր է կապն այս մասնաճյուղի և Սպառողների ազգային ասոցիացիայի միջև, ինչի արդյունքում հատկապես շահում է սպառողը, քանի որ հաճախ ծագում են խնդիրներ, որոնց վերջնական լուծումն ավելի դյուրին է դառնում Սպառողների ազգային ասոցիացիայի աջակցությամբ և օժանդակությամբ:





ԱՐՑԱԽԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ներդրումային ծրագրեր, գաղափարների բազմազանություն՝ հանուն Արցախի լուսավոր ապագայի:



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Արցախի տնտեսական զարգացման հաջողված նախաձեռնություն» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել Արցախի ներդրումային հիմնադրամին:

Մշտապես Արցախի բնակիչների, արտադրողի ու կառուցապատողի կողքին է Արցախի ներդրումային հիմնադրամը: Ավելի քան տասը տարի Արցախի Հանրապետությունում կառույցն իրականացնում է փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանն ու քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված պետական աջակցության ծրագրեր:

Վստահ, որ փոքր և միջին ձեռնարկատիրության դաշտի կայացումը ցանկացած պետության տնտեսական անկյունաքարերից մեկն է, հիմնադրամը ստեղծման օրից մշակում և կյանքի է կոչում բազմաթիվ ծրագրեր՝ ուղղված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորմանը, կապիտալի ֆինանսավորմանը, նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, գործարար տեղեկատվական և խորհրդատվական, թողարկվող արտադրանքի արտահանմանն ու շուկաներում առաջմղմանը:

Արցախի քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման նպատակով հիմնադրամի շնորհիվ կատարվել են կապիտալ ներդրումներ: Այսօր Արցախում աննախադեպ խթանվում և զարգանում է բնակարանաշինությունը՝ նպաստելով բնակարանային կառուցապատման, որպես բիզնես ուղղության, կայացմանը:





«ՌԵՅՓՍԻԴ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Բուսական յուղերի արտադրությամբ զբաղվող առաջին և առայժմ միակ ընկերությունն Արցախում. բնական հումք, արևի համ յուրաքանչյուր ոսկե կաթիլում:



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Բարձրակարգ բուսական յուղերի արտադրություն և տեղական բիզնեսի զարգացում» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Ռեյփսիդ» ՍՊԸ-ին:

Արևածաղկի, հլածուկի և կտավատի չռաֆինացված ու ռաֆինացված յուղեր, ձեթ, արտադրող «Ռեյփսիդ» ընկերությունը գրեթե տասը տարի արցախյան շուկայի լավագույն մատակարարն է: Կարևորելով սեփական արտադրանքի որակը՝ այստեղ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում թե՛ հումքին, որը պետք է լինի միայն տեղական, թե՛ արտադրական տեխնոլոգիաներին: Ձեռնարկությունում գործում է ժամանակակից գերմանական սարքավորումներով հագեցած երկու արտադրամաս: Սառը ճզմման եղանակով ստացվող ձեթը բացառապես առանց կոնսերվանտների է: Գործարանն ունի տարվա ընթացքում 20 հազար տոննա հատիկի վերամշակման հզորություն: «Ռեյփսիդ» ընկերության արտադրանքը շուկայում հայտնի է «Ոսկե կաթիլ» ապրանքանիշով:

Արտադրության տեսականին ու ծավալներն ընդարձակելու մտքերը բազում են: Այսօր ընկերությունն արտադրում է նաև կեր բոլոր տեսակի ընտանի կենդանիների և թռչունների համար:





Sunflower ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գույնի և բույրի քո ոճը

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Նոր ոճ և դիզայն» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել Sunflower ընկերությանը:



Ներդաշնակությունը գեղեցիկ ծաղկային փունջ է, լավ տրամադրությունը՝ Sunflower: Ինչո՞ւ, քանզի արևածաղիկը խորհրդանշում է պարզություն, ջերմություն և անսպառ ժպիտ: Այս արժեքներն է որդեգրել Sunflower-ի ամբողջ թիմը՝ նպատակ դնելով ունենալ ուրույն ձեռագիր ծաղկի բազմազան և մրցունակ շուկայում, առանձնանալ ոչ ավանդական տեսականիով:

Sunflower-ի սրահում կարող եք գտնել գունային և ոճային տարբեր փնջեր, կոմպոզիցիաներ, սենյակային բույսեր: Իսկ եթե խնջույքի համար ծաղկային ձևավորում եք փնտրում, ապա Sunflower-ը սրահները կզարդարի ինչպես յուրօրինակ ծաղկային, այնպես էլ փուչիկների և այլ դեկորացիաների ձևավորումով:

Sunflower-ը հասանելի է ոչ միայն հայ, այլև օտարերկրյա սպառողին: ԱՄՆ-ի գործընկերների շնորհիվ, օրինակ, կատարվում են առաքումներ Լոս Անջելեսում, շուտով առաքումներ կլինեն նաև Մոսկվայում և Էստոնիայում:

Sunflower-ի յուրօրինակ ոճին ու դիզայներական հմտություններին կարող են տիրապետել բոլորը. ընկերությունը կազմակերպում է ֆլորիստիկայի դասընթացներ, որոնք հաջողությամբ ավարտելուց հետո տրվում է դիպլոմ:

Գունային յուրօրինակ համադրություն, խենթացնող բույր ու անկրկնելի դիզայն: Sunflower-ում կատարելությունը սահմաններ չի ճանաչում, իսկ գեղեցիկն արարելն ամենօրյա աշխատանք է: Այդ է պատճառը, որ ինչպես տեղացիները, այնպես էլ զբոսաշրջիկներն ունեն ծաղիկների ու դիզայնի իրենց սիրելի անկյունը:





«ՌԻՄԱ ԹՐԱՎԵԼ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ ՀՀ զբոսաշրջության մեջ նշանակալի ներդրման և «Սպառողի գնահատական» միջազգային մրցանակաբաշխությանն աջակցելու համար պատվոգիր է շնորհվել «Ռիմա Թրավել» տուրիստական ընկերությանը:

Հանգիստը պլանավորելիս երբեք չի կարելի անտեսել այն կարևորագույն հանգամանքը, թե ում է վստահվում հանգստի կազմակերպումը:

Արդեն 22 տարի հայկական զբոսաշրջության ոլորտում գործունեություն ծավալող «Ռիմա Թրավել» ընկերությունն իր սպառողներին մշտապես ներկայանում է լավագույն առաջարկներով, մասնավորապես.

- ավտոշրջագայություն Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում,
- հանգիստ Հայաստանի և արտերկրյա առողջավայրերում, հանգստյան տներում,
- հանգիստ սոցիալական փաթեթներով,
- շրջագայություն արվեստասերների համար, նաև կորպորատիվ շրջագայություն:

Ընկերությունը նաև կատարում է.

- դեսպանությունների և հյուպատոսությունների կողմից պահանջվող փաստաթղթերի ձևակերպում,
- հյուրանոցներում տեղերի ամրագրում,
- ավիատոմսերի վաճառք/ամրագրում,
- ավտոբուսային տոմսերի վաճառք/ամրագրում,
- ապահովագրություն:

Ընկերությունն իրականացնում է նաև ապառիկ տուրեր:

«Ռիմա Թրավել» ընկերության ծառայությունները մշտապես համապատասխանում են գովազդում հնչող խոստումներին, իսկ ճամփորդությունները՝ ավարտվում գեղեցիկ հուշերով ու շնորհակալական խոսքերով:







Մսամթերք Ձեր ընտանիքի համար

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԵՎ ՈՐԱԿՅԱԼԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ

25 տարի
Առաջատար մսամթերքի բնագավառում



«Բարի Սամարացի» ընկերության հիմնադիր տնօրեն՝ Հովհաննես Հովակիմյան

«Բարի Սամարացի» ընկերությունը հիմնադրվել է 1994 թ-ին գործարար Հովհաննես Հովակիմյանի կողմից:

Ընկերությունը սպառողին է ներկայացնում սննդարար երշիկների ավելի քան չորս հարյուրտեսականի: Ընկերության արտադրանքի բարձր համային որակը ապահովվում է միջազգային չափանիշներին համապատասխանող գերմանական, շվեյցարական ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ:

Ընկերությունը բազմիցս արժանացել է մրցանակների: Վերջին երեք տարիների ընթացքում ընկերությունը կրկին արժանացել է սպառողի բարձր գնահատականին և ստացել «Տարվա Լավագույն Ապրանքանիշ, Խելացի Կառավարում 2017թ», «Որակի Երաշխիք 2018թ», «Երկրի Դեմք 2019թ» մրցանակները:



Հեռ. (+374 10) 47 25 88, 47 25 50, 47 48 43
Հասցե՝ ք. Երևան, Նոր Արեշ 117/7, 22 փող.
www.barisamaratsi.am

«ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



«Բարի Սամարացի» ընկերությունը հիմնադրվել է 1994 թ. գործարար Հովհաննես Հովակիմյանի կողմից: Հիմնադրման առաջին օրերից ձևավորվել են ընկերության գործելաոճն ու սկզբունքները, որոնք այսօր ավելի են կատարելագործվել անցած երկար ճանապարհին ձեռք բերած փորձի շնորհիվ:

«Բարի Սամարացի» ընկերության աշխատասեր ու բարեխիղճ աշխատակազմը, պարոն Հովակիմյանի գլխավորությամբ անում է հնարավորինս, որպեսզի այժմյան տնտեսական բարդ պայմաններում իր սպառողին առաջարկի բարձրորակ, համեղ և մատչելի արտադրանք: Ընկերությունը սպառողին է ներկայացնում սննդարար երշիկների ավելի քան երկու հարյուր տեսակ: Ընկերության արտադրանքի բարձր համային որակը ապահովվում է շնորհիվ միջազգային չափանիշներին համապատասխանող գերմանական և շվեյցարական ժամանակակից տեխնոլոգիաների:

Բարձրորակ մսամթերք արտադրելու սկզբունքը գործնականում ամրապնդելու համար ընկերությունը նախապատվությունը տալիս է փորձի փոխանակմանը, որի շրջանակում Հայաստան են հրավիրվում արհեստավարժ մասնագետներ առաջադեմ երկրներից, ինչպիսիք են Գերմանիան, Շվեյցարիան, Իտալիան, Ավստրիան, Ռուսաստանը՝ իրենց մասնագիտական փորձը փոխանցելու և նոր հաջողությունների հասնելու համար: Նաև արտադրության մասնագետները գործուղվում են այդ երկրների լավագույն կազմակերպություններ՝ սեմինարների, թրեյնինգների, համաժողովների մասնակցելու և ծանոթանալու տեղի մսամթերքի արտադրության նորագույն տեխնոլոգիաներին:

Մսամթերքի արտադրման ոլորտում օգտագործվում են հսկաներ համարվող Եվրոպական և Ամերիկյան՝ մսի վերամշակման գերժամանակակից սարքավորումներ, ինչպիսիք են՝ LASKA, ALPINA, HENDELMAN, KREMER GREBE, VEMAG և այլն, որոնք որակի ապահովման բնագավառում մեծ ազդեցություն ունեն:

Ընկերության զարգացումը խթանում են նաև միջազգային սեմինարները, EXPO-ներին մասնակցությունն ու համալիր այլ միջոցառումները, որոնց ժամանակ ընկերությունը սպառողին է ներկայանում բարձրակարգ ու մշտապես թարմացվող նոր արտադրատեսակով:

«Բարի Սամարացին» բազմիցս արժանացել է մրցանակների, որոնցից են.

- Գրան Պրի, Առևտրի առաջատար, 2008-2011,
- Gellup International, Լավագույն մսամթերք արտադրող ընկերություն, 2013, 2014,
- ԱՊՀ երկրների կողմից, Մրցանակաբաշխության դափնեկիր, 2011,
- Սպառողների ազգային ասոցիացիայի 25-ամյակի առթիվ, Ոսկե մրցանակ, 2016,
- Ստանդարտացման բնագավառում Ոսկե մրցանակ, 2015, 2016,
- Երկրները մեկ հարկի տակ, 2015,
- Տարվա լավագույն ապրանքանիշ, 2011-2017,
- Միջազգային ստանդարտների ներդրման բնագավառում, 2017,
- Արտադրանքի և ծառայությունների որակի ապահովման բնագավառում, 2017,
- Խելացի կառավարում, 2018,
- Որակի երաշխիք, 2018, 2019,
- Երկրի դեմք,
- Տարվա ապրանքանիշ և Տարվա հանրային ծառայող:



«ԹԱՄԱՐԱ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Թամարա» ընկերությունը հիմնադրվել է 1988 թ., Երևանում որպես պաղպաղակի արտադրական կոոպերատիվ: 1992-ին ծավալներն ընդլայնելու նպատակով Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում ընկերությունը ձեռք է բերել 2600 ք/մ տարածք՝480 ք/մ արտադրական տարածքով, որտեղ 1997 թ. կառուցվել են լաբորատորիա, մեքենաների մեծ հավաքատեղի, պաղպաղակի, կաթի և կաթնամթերքի ընդունման, վերամշակման, ալրային և հրուշակեղենի արտադրամասեր: Ընկերության աշխատանքի հիմնական սկզբունքներից են առողջության համար անվտանգ և որակյալ արտադրանք ապահովելը, արտադրանքի որակի խիստ վերահսկումը, սպառողներին մշտապես նոր տեսականու մատուցումը: Ընկերությունը մշտապես հետամուտ է տեխնիկական միջոցների և տեխնոլոգիական պրոցեսների տարեցտարի արդիականացմանը: Ներդրված ժամանակակից եվրոպական հոսքագծերն



ու սարքավորումները ապահովում են արտադրանքի՝ միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչը նշանակում է՝ արտադրական պրոցեսում հնարավորինս նվազում է մարդու և հումքի շփման հավանականությունը:

«Թամարա» ընկերությունը շուկայում պաղպաղակի արտադրության ոլորտի առաջատարներից է: Պաղպաղակ արտադրող, փաթեթավորող սարքավորումները և այլ անհրաժեշտ պարագաները հիմնականում ներկրվում են Ավստրիայից և Իտալիայից՝ Technogel, Seda, Chesalpina Food, Cold Car ընկերություններից:



«Թամարա» ընկերությունը ստացել է Միջազգային Ստանդարտների համապատասխանության վկայական՝ ISO 9002:98 (2000), ISO 9001:2002 (2003), ISO 9001:2008 (2013): 2002-ից «Թամարա» ՍՊԸ-ն Կոտայքի մարզի Առևտրաարդյունաբերական պալատի անդամ է:

«Թամարա» ՍՊԸ-ն աշխատատեղերի կարևոր խնդիր է լուծում տարածաշրջանում՝ ապահովելով տարեկան միջինը 250 աշխատատեղ:

«Թամարա» ընկերությունն ուրույն տեղ ունի կաթի և կաթնամթերքի մթերման, վերամշակման, արտադրման ոլորտներում: Հումքը ձեռք է բերվում ծովի մակարդակից 2000 մ բարձրությամբ մարգահովիտներից՝ 200-ից ավել ֆերմերային տնտեսությունների ապահովելով մշտական աշխատատեղերով և կայուն եկամուտով: Մթերման կետերում կաթը ժամանակակից լաբորատոր սարքավորումների միջոցով տեստավորվում և սառեցվում է՝ բացառելով մանրէների զարգացումը, ապա հատուկ փոխադրամիջոցներով տեղափոխվում է գործարան:

Ընկերությունն արտադրում է ավելի քան 90 տեսակ պաղպաղակ, պաղպաղակ-տորթեր, 15 անուն կաթնամթերք (կաթ, մածուն, քամած մածուն, յոգուրտ, թան, կեֆիր, կաթնաշոռ, թթվասեր, թթվասերային մթերք, կարագ, կաթի փոշի և այլն), պանիրների տեսականի, չոր կաթ, որը ստացվում է նորագույն սարքավորումների միջոցով: Բարձր ջերմաստիճանի տակ կաթը խտացվում է, ջրազրկվում, հերմետիկ փաթեթավորվում: Ընկերությունն ավելի քան 10 տարի զբաղվում է թխվածքների և թխվածքաբլիթների արտադրությամբ (թռչնի կաթ, մեղրային, Նապոլեոն, մրջնաբույն, օղաբլիթ, չորաբլիթ, չորահաց, քաղցրաբլիթ, չրով գաթա, մածունով գաթա, շերտավոր խմորեղեն), որի ժամանակ օգտագործվում են սեփական արտադրության խտացրած կաթն ու կարագը: Արտադրատեսակներն ունեն տարբեր բաղադրություն, յուղայնություն և փաթեթավորում: Նախատեսվում է շուկայում ներկայանալ ջնարակված պանրիկներով և հալած պանրով:

Պատրաստի արտադրանքի որակի ամենօրյա հսկողությունն իրականացվում է հենց գործարանում, որտեղ խստագույնս հետևում են թարմությանը, անվտանգությանը, մակնշման և պիտանիության ժամկետներին, հիգիենային: Արտադրանքի պահպանությունը համապատասխանում է ՀՀ գործող ստանդարտներին:

«Թամարա» ընկերությունը 2019-ի տարեսկզբից խոշոր ներդրում է կատարել՝ ձեռնամուխ լինելով նոր պահեստների կառուցմանը: Տարվում են շինարարական աշխատանքներ արտադրամասերը մեծացնելու և վերազինելու ուղղությամբ:

Ընկերությունը համագործակցում է մի շարք կազմակերպությունների հետ և՛ արտահանման, և՛ ներմուծման, և՛ տեղական շուկայում: Արտադրանքն արտահանվում է ԱՄՆ, Ռուսաստանի Դաշնություն և Վրաստան:



«Թամարա» ընկերությունը պարբերաբար արժանանում է մի շարք մրցանակների, այդ թվում.

1. Որակի մրցանակ ՀՀ վարչապետից:
2. «Ոսկե աստղ Եվրոպայի կամար» միջազգային մրցանակ, Փարիզ, 2000:
3. Դիպլոմ որակի համար ՀՀ Կառավարության կողմից:
4. «Ադամանդե աստղ» մրցանակ, Նյու Յորք, 2001:
5. Ոսկե մեդալ Արդյունաբերողների և գործարարների միության կողմից:
6. «Հայաստանի լավագույն պաղպաղակ» անվանակոչում «Համազգային վստահություն» խորհրդի կողմից, 2011 (այս անվանակոչումը շնորհվել է 3 տարի շարունակ):
7. Պատվոգիր արտադրանքի բարձր որակի և սպառողներին առաջարկվող տեսականու մշտական ընդլայնման համար Սպառողների ազգային ասոցիացիայի և Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ-ի կողմից, 2013:
8. Լավագույն մանկական պաղպաղակ արտադրող, 2013:
9. Համաժողովրդական քվեարկության արդյունքում «Թամարա» ընկերությունը ճանաչվել է որպես նոր որակի չափանիշ կաթնամթերքի շուկայում:
10. Հայաստանի սպառողների ազգային ասոցիացիայի 25-ամյակի առթիվ ընկերությունը ճանաչվել է որպես լավագույն արտադրող և արժանացել ոսկեզօծ արձանիկի:



Տնտեսական ապրանքների գործարան

ՍԿՍԱԾ 1993

ԱԹԵՆՔ

ՄԱՄԱԹԵՐՔ



ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԵՎ ՈՐԱԿՅԱԼԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹ

ԱԹԵՆՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Հայր և որդի Երիցյաններ» ընկերության կողմից 1993 թ. հիմնադրված «Աթենք» ընկերությունն իր արտադրական գործունեությունը սկսել է 3 տեսակի երշիկի արտադրությունից: Տարիների ընթացքում հետևողական աշխատանքի շնորհիվ՝ ընկերությունն աստիճանաբար ավելացրել է թե՛ տեսականին, թե՛ արտադրության ծավալները:

2009 թվականին գործարանի սեփականատերեր դարձան Ադամյան եղբայրները, կատարվեցին լուրջ ներդրումներ, ձեռք բերվեցին եվրոպական ժամանակակից սարքավորումներ և ընդլայնվեց արտադրական հզորությունը:

Այսօր արդեն «Աթենքը» շուկայում ներկայանում է ավելի քան 200 ապրանքատեսակով: Ընկերության հմուտ տեխնոլոգների շնորհիվ՝ այստեղ միահյուսվում են ավանդականն ու ժամանակակիցը, եվրոպականն ու ազգայինը. արդյունքում սպառողին է հասնում մսամթերք՝ հրաշալի ու միայն այս ապրանքանիշին բնորոշ համով:

Հիմնադրման օրվանից «Աթենք» ընկերությունը նպատակ է ունեցել սպառողին առաջարկելու թարմ ու որակյալ մսամթերք: Քայլելով ժամանակին համընթաց՝ ուսումնասիրվում ու ներդրվում են առավել ժամանակակից սարքավորումներ, գործարկվում՝ նորանոր հոսքագծեր:

Մարքեթինգային հետազոտությունների և վերլուծությունների միջոցով ընկերությունը պարբերաբար ծանոթանում է սպառողների պահանջներին, արտադրատեսակների վերաբերյալ նրանց վերաբերմունքին ու ցանկություններին՝ պարբերաբար նրանց դատին հանձնելով նոր արտադրատեսակներ: Ավանդական ու ժամանակակից տեխնոլոգիաների համադրմամբ սպառողին է ներկայացվում անընդհատ թարմացվող լայն ապրանքատեսականի՝ ընձեռելով ընտրության մեծ հնարավորություն ողջ ընտանիքի համար:

Մեր տեխնոլոգների փորձը, վերապատրաստումներն ու միջազգային մասնագետների հետ փորձի փոխանակումները հնարավորություն են տալիս շուկայում առանձնանալու որպես որակյալ մսամթերք արտադրող ընկերություն:

Հավատարիմ մնալով իր արժեքներին՝ ընկերությունը.

• գնորդին ավելի մոտ լինելու համար տարեցտարի ավելացնելու է ֆիրմային խանութները, «Աթենք» մսամթերք մատակարարող վաճառքի կետերը,

• կատարելագործելու է մատակարարման համակարգը հայաստանյան և արցախյան շուկայում,

• ամրապնդելու է դիրքերը վրացական շուկայում,


• լուրջ քայլերով գրավելու է ԱՊՀ և արտաքին շուկան:

Լինելով մսամթերքի առաջատար՝ ընկերությունն իր ապրանքատեսականին հասանելի է դարձրել ոչ միայն Երևանում, այլև Հայաստանի բոլոր մարզերում և Արցախում: Մատակարարման շղթայի արդյունավետ աշխատանքն ամեն օր ապահովում են առաքման բաժնի աշխատակիցները, ընկերության ավտոմեքենաները, որոնք հագեցած են մսամթերքի թարմությունն ու սանիտարահիգիենիկ պայմաններն ապահովող սարքավորումներով: Վաճառքի պատասխանատուներն ամեն օր իրականացնում են այցելություններ վաճառակետեր, ստուգում ներկայացվող ապրանքի թարմությունը: Մենք գնահատում ենք մեր յուրաքանչյուր հաճախորդին և առաջարկում կարգապահության շնորհիվ ստեղծվող մսամթերք:

Մենք վստահ ենք, որ «Աթենք» ընկերության հաջողությունները, բազմաթիվ ձեռնարկումների իրականացումը հնարավոր են դառնում ընկերությանը և աշխատանքին նվիրված աշխատակիցների շնորհիվ, նրանց, ովքեր կարողանում են սիրել աշխատանքը, վերածել այն խաղի՝ գտնելով նրանում հոգեկան բավարարվածություն և արժանապատվության զգացում:

Տարիների ընթացքում կարողանալով միավորել ընկերությունում բազմամյա վաստակ ունեցող մարդկանց փորձը, գիտելիքները, խորհուրդը և երիտասարդ մասնագետների եռանդն ու ներուժը՝ այսօր մենք ունենք ամուր թիմ, որի համախմբված աշխատանքի արդյունքում ստեղծվում են այնպիսի արդյունքներ, որոնց հնարավոր չի հասնել միայնակ:

Մենք չենք կարևորում աշխատանքային փորձը, մենք ցանկանում ենք, որ մեր թիմին միանան նպատակասլաց, խելացի, համառ մարդիկ, որոնք ցանկանում են դառնալ իրենց գործի իսկական մասնագետները, մարդիկ, որոնք հասկանում են, որ մեր, մեր երեխաների, մեր ժողովրդի բարօրությունը կախված է մասնագիտության նկատմամբ վերաբերմունքից:



«ԱՇՏԱՐԱԿ-ԿԱԹ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Պարգև» ընկերության «Աշտարակ-Կաթ» ապրանքանիշը Հայաստանում որակյալ կաթնամթերք և պաղպաղակ արտադրողների շարքում համարվում է առաջատարներից մեկը: «Աշտարակ-Կաթը» իր սպառողների համար ստեղծել է աննախադեպ պայման՝ օգտվել ամբողջ աշխարհում յուրահատուկ և առողջարար կաթից, որը յուրահատուկ է նրանով, որ ընկերությունը մթերում է Հայաստանի հեռավոր մարզերի՝ 2000 մ և ավելի բարձրության ալպիական մարգագետիններից, որտեղ առկա են չքնաղ բնություն, մաքուր լեռնային օդ, լեռնային սառնորակ, միայն Հայաստանին բնորոշ քաղցրահամ ջուր:




Ընկերության արտադրատեսականին իր կայուն և բարձր որակով մեծ ճանաչում է ձեռք բերել: Դրա վկայությունն է 2019 թ. ապրիլի 27-ին Երևանում «Բիզնես-Դիալոգ» և «Բիզնես նյուզ» ընկերությունների կողմից կազմակերպված միջոցառմանը «Աշտարակ-Կաթ» ապրանքանիշի՝ Ռուսաստանի Դաշնության Որակի ակադեմիայի (ՎՕՔ) «Որակի նշան» մրցանակին արժանանալը: Մրցանակը հանձնել է Որակի համառուսաստանյան կազմակերպության նախագահ, տնտեսագիտական և տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գենադի Պետրովիչ Վորոնինը: Մրցանակի հանձնման արարողությանը ներկա էին նաև ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման, Ռուսական ռեգիստր սերտիֆիկացման ասոցիացիայի, Ռուսաստանի գործարարների միության, ՀՀ Մննդամթերքի անվտանգության տեսչության և սպառողական կազմակերպությունների ներկայացուցիչները:



Պարտավորեցնող է, որ «Աշտարակ-Կաթի» արտադրանքը բարձր և արժանի գնահատական է ստանում ոչ միայն ՀՀ-ում, այլև որակի չափանիշներ սահմանող օտարերկրյա հեղինակավոր կազմակերպությունների կողմից:

«Պարգև» ընկերության «Աշտարակ-Կաթ» ապրանքանիշի հերթական հաղթանակը «Տարվա լավագույն ապրանքանիշ և տարվա հանրային ծառայող 2019» մրցանակն է Համազգային խորհրդի կողմից:



Սոցիոլոգիական հարցումների և փորձագիտական գնահատման արդյունքում «Աշտարակ-Կաթն» արժանացել է «Որակյալ կաթնամթերք արտադրող տարվա ընկերություն» անվանակոչմանը:

«Աշտարակ-Կաթի» դերը բարձր է գնահատվում նաև բանակաշինության գործում, որտեղ ակտիվ մասնակցություն է ունեցել ինժեներական և այլ աշխատանքներին, ինչի համար ՊԲ-ի և ՊՆ-ի կողմից երեք տարի անընդմեջ արժանացել է տարբեր պատվոգրերի և շնորհակալագրերի:



Առողջ սնունդ, առողջ սերունդ

ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԵՎ ՈՐԱԿՅԱԼԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԻՑ

Царский Продукт

"ЦАРИЦИНО"
КОМБИНАТ МЯСОПРОДУКТОВ



ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԵՎ ՈՐԱԿՅԱԼԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՑԱՐԻՑԻՆՈ» ՄՍԱՄԹԵՐՔԻ ԿՈՄԲԻՆԱՏ
ՀՀ, ք.Երևան, Արին-Բերդի փ, 10/4, Հեռ. +37410432777

ՑԱՐԻՑԻՆՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ Царский продукт ապրանքանիշ

«Ցարիցինո» մսամթերքի կոմբինատն իր արտադրանքի բարձր որակով և արտադրության ծավալով հայրենական շուկայում հաստատուն տեղ ունի լավագույն 5 արտադրողների ցանկում: Միջազգային չափանիշներով կառուցված արտադրական այս կոմբինատի արտադրամասերում առկա են սանիտարահիգիենիկ գերազանց պայմաններ և լաբորատոր հսկողություն:

Ընկերության արտադրանքն իրացվում է համապատասխանության սերտիֆիկատով, համապատասխան սառնարան-ավտոմեքենաներով: Հումքը տեխնոլոգիական մշակումից առաջ և հետո ենթարկվում է լաբորատոր փորձաքննության, իսկ տեխնոլոգիական գործընթացի բոլոր փուլերն իրականացվում են ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերին, տեխնիկական հրահանգներին ու բաղադրագրերին համապատասխան:

«Ցարիցինո» ընկերությունը շուկայում ներկայանում է Царский продукт ապրանքանիշով: Ընկերությունում մշտապես հաշվի են առնվում սպառողի նախասիրությունները, և արտադրամասում մշակվում և կիրառվում են ընկերության անվանը բնորոշ բաղադրատոմսեր: Մսամթերքի տեսականին բազմազան է, այն ներառում է.

- կիսաապխտած երշիկներ (Սերվելատ, Կրեմլյովսկայա, Մոսկովյան, Ցարիցինսկի, Սինյուգա, Գյումրի, Կրակովյան, Որսորդական),
- հում ապխտած երշիկներ (Ցարիցինսկի, Մոսկովյան, Կոնյակի համով),
- եփած երշիկներ (Սիրողական, Բժշկական, Կրեմլյովսկայա, Ցարիցինսկի, Սինյուգա),
- նրբերշիկներ (Սլավյանսկի, Ռուսական, Ցարիցինսկի, Տնական),
- Նրբերշիկ բնական թաղանթով, Սարդելկա բնական թաղանթով, Սարդելկա, Շպիկաչկա, Վետչինա, Բաստուրմա, Սուջուխ, Ֆիլե, Կողոսկր, Պաշինա, Շեյկա, Խոզաճարպ, մսի տեսականի և այլն:



ՉԱՆԱԽ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կաթնամթերքի արտադրության ոլորտում հաստատուն դիրք ունի «Չանախ» ընկերությունը, որը սպառողին մշտապես ներկայանում է սննդարար և առողջարար կաթնամթերքի մեծ տեսականիով՝ մածուն, կաթնաշոռ, կաթ, թան և թթվասեր: Այս բոլոր արտադրատեսակները համապատասխանում են Ստանդարտների ազգային ինստիտուտի սերտիֆիկացման և լաբորատոր փորձաքննության չափանիշերին: «Չանախն» արտադրում է նաև «Նանե» ապրանքանիշով ացիդոֆիլային մածունը, որի բիֆիդոբակտերիաները բացառիկ կենսունակության շնորհիվ կենդանի են մնում ստամոքսի թթվային միջավայրում՝ վերականգնելով աղիների միկրոֆլորան: Այս ընկերության արտադրած կեֆիրը կարգավորում է ստամոքսի աշխատանքը և օգտակար է երեխաներին, որոնց ուղղված են հատկապես «Անուշիկ» ապրանքանիշով մածունն ու թթվասերը: Այսօր հայրենական շուկան համալրված է նաև «Չանախ» ապրանքանիշով տարբեր յուղայնությամբ կաթնաշոռներով և հերմետիկ փաթեթավորմամբ կաթով: «Չանախ» ընկերությունն արտադրությունն իրականացնում է եվրոպական հոսքագծերով, որոնցով վերջերս արդիականացվել են ընկերության արտադրամասերը:







«Չանախի» կարևորագույն նպատակներից են.

- սպառողների հարաճուն պահանջները մշտապես բավարարելը,
- արտադրողականության բարձրացման, մրցունակ արտադրանքի, տեսականու ավելացման և վաճառքի ծավալների աճի հաշվին ընկերության կայուն ֆինանսական և տնտեսական վիճակ ապահովելը,
- աշխատակազմի աշխատանքային պայմաններն ու սոցիալական վիճակը բարելավելը,
- մասնագետների ընտրության, տեղաբաշխման, ուսուցման և մասնագիտական զարգացման գործընթացը բարձր հիմքերի վրա դնելը:

Հարկ է նշել, որ Չանախ ընկերությունը մեծ պատասխանատվությամբ է վերաբերվում մակնշման գործընթացին՝ արտադրանքի վրա նշելով.

- բաղադրությունը,
- սննդային արժեքը 100 գ-ում,
- էներգետիկ արժեքը 100 գ-ում,
- պիտանիության ժամկետը,
- պահման պայմանները,
- զտաքաշը:





ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ԵՎ ՈՐԱԿՅԱԼԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԻՑ


ARMENIA
ՄՍԱՍԹԵՐՔ
Ձեր համեղ ընտրությունը
Լավագույնը եվ ամենաառատը հայրենական արտադրանքից
ԱՐՏԱԴՐՈՂ՝ «ԱՐՄՄԻԹ» ՍՊԸ
(010) 46 77 33
www.armmeat.am

«ԱՐՄ ՄԻԹ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



«ԱՐՄ ՄԻԹ» ՍՊԸ-ն («Արմենիա մսամթերք» ապրանքային նշանով) հիմնադրվել է 2017 թ.: Այն ներկայացնում է տարածաշրջանում լավագույն մսամթերքը և հանդիսանում է «Մուշ» ընկերության իրավահաջորդը: Իր գործունեության 23 տարիների ընթացքում ընկերությունը շուկայում հայտնի է եղել լայն տեսականիով, արտադրության բարձր որակական և համային հատկանիշներով, ինչպես նաև մշտապես վայելել է մեծ պահանջարկ:



«ԱՐՄ ՄԻԹ» ընկերությունը, ի գիտություն ընդունելով «Մուշի» ունեցած փորձն ու հաջողության գրավականը, պահպանել է լավագույնն ու կատարելագործել արտադրության որակը՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ, ժամանակակից սարքավորումներ և ընդգրկելով արտադրության գործընթացում ոլորտի լավագույն մասնագետներին: Ներկայումս ընկերության գործարանը հագեցած է եվրոպական արտադրության նորագույն սարքավորումներով, օդափոխության համակարգով և լաբորատորիայով:

Ընկերությունը սպառողին է ներկայանում լայն տեսականիով.





- **եփած երշիկներ,**
- **նրբերշիկներ, սարդելկաներ,**
- **կիսապատրաստված երշիկներ,**
- **կիսապատրաստվածքներ,**
- **ավանդական շարք,**
- **դելիկատեսներ,**
- **հում ապխտած երշիկներ:**

Բացի վերոնշյալ տեսականուց՝ ընկերությունն արտադրում է նաև 100 անուն այլ ապրանքատեսակ:

«ԱՐՄ ՄԻԹ»-ի ապրանքատեսականուն ծանոթ են նաև արտասահմանում, մասնավորապես՝ Վրաստանում: Արտադրվող ողջ տեսականին ունի պետստանդարտի կողմից սահմանված և հաստատված անհրաժեշտ տեխնիկական պայմանները:



ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԲԻԿ 90 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«Դի Ջի Միթ Ֆուդ» ապրանքանիշ



«Բաբիկ 90» մսամթերքի կոմբինատում արտադրությունն իրականացվում է գերմանական և շվեյցարական սարքավորումներով: Այստեղ խստագույնս պահպանում են սանիտարահիգիենիկ բոլոր նորմերը: Օգտագործվում են ներմուծված միս և այլ հումք: Գործարանն ունի լաբորատորիա, որտեղ մշտապես ստուգվում են և հումքի, և պատրաստի արտադրանքի որակը:

«Դի Ջի Միթ Ֆուդ» ապրանքանիշով մսամթերքի տեսականին ներառում է վետչինա, սարդելկա, նրբերշիկ, սուջուխ, բաստուրմա, ապխտած, եփած, կիսաապխտած, հում ապխտած երշիկների տեսականի, ապխտած մսի տեսականի՝ ֆիլե, բուժենինա, բեկոն, խոզի կողեր, կիսապատրաստվածքներ՝ քյաբաբի ֆարշ, սառեցրած քյուֆթա, սառեցրած քյաբաբ, աղացած միս, ապխտած հավ, ջերքի:

Pink Berry ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ




2013 թվականից Pink Berry ընկերությունն արտադրում է առանձնահատուկ համով և որակական հատկանիշներով աչքի ընկնող փափուկ պաղպաղակ, որը հիշեցնում է մանկության «լցնովի» պաղպաղակի համը: Ընկերությունն արտադրում է միջազգային ստանդարտներին համապատասխան պաղպաղակներ՝ պաղպաղակի արտադրության մեջ ստեղծելով նոր չափանիշներ: Հայաստանյան շուկայում Pink Berry-ն համագործակցում է սիրված և ճանաչված բազմաթիվ սրճարանների հետ:



Այսօր սպառողի կողմից շատ սիրված են հատկապես Մայոժնիները, Pinko-ն, Կոնը, Դոպինգը: Վերջերս ընկերությունը ներկայացրել է իր նոր պաղպաղակը՝ Դիլիմը, որն արդեն հասցրել է սիրվել պաղպաղակասերների կողմից: Pink Berry ընկերության արտադրանքը վաճառվում է Երևան քաղաքի ամեն մի անկյունում, ինչպես նաև Գյումրի, Էջմիածին և Վանաձոր քաղաքներում:

ԱՌԴԵԼԻԿԱՏԵՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



«Առդելիկատես» ընկերության արտադրամասերն աչքի են ընկնում սանիտարահիգիենիկ պահանջների բավարարմամբ, աշխատակիցները պարտադիր հագնում են աշխատանքային արտահագուստ: Գործարկվող սարքավորումները, փաթեթավորման պարագաները և հավելանյութերը հիմնականում ներմուծվում են իտալական, գերմանական, շվեյցարական ընկերություններից: Արտադրանքն իրացվում է և՛ հանրապետությունում, և՛ դրա սահմաններից դուրս: Մասնավորապես՝ մայրաքաղաքում «Առդելիկատեսի» մսամթերքը կարելի է ձեռք բերել ընկերության արտադրամասին կից ֆիրմային խանութ-սրահից կամ այլ վաճառակետերից: «Առդելիկատես» ապրանքանիշով տեսականին ներառում է հում, եփած, ապխտած երշիկների մոտ 80, մսային կիսապատրաստվածքների մոտ 30 տեսակ, ինչպես նաև բաստուրմա, սուջուխ, սալյամի, սարդելկա, հոթ դոգի նրբերշիկներ և այլն:

ԼՈՒՄԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Թեև «Լումա» ընկերության արտադրական ծավալները փոքր են, սակայն նրա արտադրանքը որակյալ է, համեղ և մանրակրկիտ բավարարում է օրենքով ներկայացվող պահանջները: «Լումա» ապրանքանիշով տեսականին բազմազան է: Այս գործարանում արտադրվում են հում, ապխտած, եփած երշիկների տեսականի, նրբերշիկ, սարդելկա, բաստուրմա, սուջուխ և այլն: Ընկերության նպատակը մեկն է՝ բնակչությանն ապահովել որակյալ արտադրանքով:





ՎԵՐԴԵ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



ՎԵՐԴԵ մաքրման սրահում կիրառվում է Green Earth տեխնոլոգիան, որը թույլ է տալիս գերազանց արդյունքի հասնել նույնիսկ ամենանուրբ իրերի պարագայում: Ընկերությունն իրականացնում է.

1. Քիմմաքրում կամ չոր մաքրում, երբ չվնասելով հագուստը հեռացվում են սննդային յուղը, ճարպը, բենզինը, մոմը: Քիմիական մաքրումն իրականացվում է Firbimatic իտալական ընկերության սարքավորումներով:

2. Խոնավ մաքրում: Այս դեպքում չեն օգտագործվում քիմիական նյութեր: Մաքրումն իրականացվում է համակարգչային վերահսկողություն ունեցող սարքավորումներով, քայքայվող և բնության համար անվնաս օճառներով ու կոնդիցիոներներով: Խոնավ մաքրման վերջնական փուլն իրականացվում է հատուկ չորանոցների օգնությամբ: Մաքրման այս եղանակը հարմար է մետաքսյա, քաշմիրի, բրդյա և նուրբ գործվածքով հագուստների դեպքում: Այս միջոցն անթերի հեռացնում է գինուց, թեյից, սուրճից առաջացած հետքերը: ՎԵՐԴԵ մաքրման սրահում խոնավ մաքրման տեխնոլոգիան կիրառելու ժամանակ օգտագործվում են Miele Machines գերմանական ընկերության սարքավորումները:

3. Լաքաների մաքրում: Ընկերության բարձրակարգ մասնագետները որակյալ նյութերով հեռացնում են յուղի, բենզինի, թանաքի, գինու, մրգերի ու այլ նյութերի դժվար հեռացվող հետքերը:

4. Օսլայում: ՎԵՐԴԵ մաքրման սրահն օսլայում է ամենաորակյալ նյութերի օգնությամբ Seitz գերմանական ընկերության հատուկ միջոցներով:

5. Արդուկում: Արդուկման համար նախատեսված PONY իտալական ընկերության սարքավորումները թույլ են տալիս շտկել նույնիսկ ամենափոքր ծալքերը:

6. Վարագույրների ու գորգերի, հարսանյաց ու երեկոյան զգեստների, թավշյա, կաշվե ու մորթե իրերի մաքրում:

7. Իրերի ներկում:

ԷԼԲԱՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայ-գերմանական «Էլբատ» ընկերությունը, որն արտադրում է կապարաթթվային կուտակչային մարտկոցներ տարբեր ավտոմեքենաների համար, 2011 թ. Quality Austria ավստրիական կազմակերպության կողմից արժանացել է Որակի կառավարման համակարգի ISO 9001:2008 միջազգային սերտիֆիկատի: Ընկերության մարտկոցներն ունեն երաշխիքային և հետերաշխիքային սպասարկում:



ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերությունը շարունակում է մշտապես սոցիալական ներդրումներ կատարել մի շարք ոլորտներում՝ կրթություն, մշակույթ, շրջակա միջավայրի պահպանություն, առողջապահություն, համայնքային զարգացում, սպորտ և այլն: Ընկերության նպատակը հասարակության բարօրությունը և բաժանորդների բարձրակարգ սպասարկումն ապահովելն է:



Բնական գազն օգտագործում ենք մեր բնակարաններում, որպես հարմար և մատչելի վառելիք: Սակայն շատերը մոռանում են տարրական զգուշության մասին և դրանով վտանգի ենթարկում իրենց, մտերիմների ու հարևանների կյանքը:

Բնակչության անվտանգությունը հենց այն հարցն է, որի վրա հատուկ ուշադրություն են հրավիրում «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերության աշխատակիցները՝ գազի սարքավորումներ տեղադրելիս:



Որպեսզի կապույտ վառելիքը ջերմություն ու հարմարավետություն բերի ձեր տուն, իսկ ձեր կյանքն անվտանգ լինի, անհրաժեշտ է հիշել գազի վտանգավոր հատկությունների մասին, խստորեն պահպանել գազի անվտանգության կանոնները կենցաղում, հստակ հետևել տվյալ սարքի անձնագրում նշված կանոններին և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերության աշխատակիցների ցուցումներին:

Գրեթե բոլոր արտակարգ պատահարների հիմքում մարդկային գործոնն է, ինչը, ցավոք, անկանխատեսելի է: Թունավորումից, գազի արտահոսքի հետ կապված այլ վտանգներից խուսափելու համար պետք է պարզապես առավել զգոն լինել: Ընդ որում, ձմռանը պատկերն առավել վտանգավոր է, քանի որ գազասպառող բնակիչները ջեռուցում են բնակարանները՝ շատ դեպքերում անտեսելով անվտանգության կանոնները:

Գազի ներտնային սպասարկման ձայնաազդանշանային անվտանգության համակարգերի շուրջօրյա և անխափան աշխատանքը պարտադիր է: Դժբախտությունների պատճառ շմոլ գազն անգույն է, հոտ չունի և անզեն աչքով հնարավոր չէ տեսնել կամ զգալ: Այն առաջանում է գազի թերայրումից, մինչդեռ այրման համար հարկավոր են գազ և թթվածին, մաքուր օդ: Շմոլ գազն առաջանում է թթվածնի պակասի դեպքում:

Գազի թերայրում է առաջանում, օրինակ, գազօջախի այրիչները երկար ժամանակ միացրած թողնելու դեպքում: Երբ սենյակը չի օդափոխվում, թթվածինը վերցնում է ներսից ու կատարվում է մաքուր այրում: Բնականաբար, թթվածինը կամաց-կամաց պակասում է, առաջանում է թթվածնային քաղց, և արտադրվում է բավականին թունավոր շմոլ գազ:

Ձայնաազդանշանային անվտանգության համակարգերը պետք է միշտ միացված լինեն էլեկտրականությանը:

Բաժանորդների մոտ թյուր կարծիք կա, որ այդ սարքերը շատ էլեկտրաէներգիա են ծախսում, դրա համար էլ պարբերաբար անջատում են, բայց իրականում տարեկան ծախսը 300 դրամի սահմաններում է, ամսական՝ մոտավորապես 25 դրամ:

Կրկին հորդորում ենք անվտանգության սարքերը 24 ժամ շարունակ միացած պահել, ինչը հնարավորություն կտա դժբախտ պատահարներից խուսափել:

Ձեռուցման սեզոնին գազի անվտանգ օգտագործման նկատմամբ ուշադրությունը բարձրացնելու, ինչպես նաև կենցաղում գազօգտագործման ժամանակ դժբախտ պատահարները կանխելու նպատակով «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությունը հիշեցնում է գազ սպառողներին, որ գազի սարքերի օգտագործման ժամանակ անհրաժեշտ է անշեղորեն պահպանել անվտանգության տարրական կանոնները.

• առանց հսկողության մի՛ թողեք աշխատող բաց այրման խցով (ծխատարով) գազասարքերը և գազօջախները,

• գազասարքերի երկար շահագործման ընթացքում հաճախակի օդափոխե՛ք շինությունը,

• գազօգտագործող սարքավորումների փոխարինման կամ տեղադրման համար դիմե՛ք «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերություն,

• գազասպառման համակարգում փոփոխություններ կատարելու համար գրավոր դիմե՛ք «Գազպրոմ Արմենիա» ընկերություն,

• հնարավորության դեպքում լոգարաններում տեղադրված ջրատաքացուցիչները տեղափոխե՛ք խոհանոց կամ դրա համար նախատեսված այլ շինություն:

Չի թույլատրվում

• էլեկտրական սնուցումից անջատել ձայնաազդանշանային անվտանգության համակարգը,

• գազասարքերի ինքնակամ տեղադրում, տեղափոխում, փոխարինում և նորոգում,

• գազօջախների օգտագործում ջեռուցման նպատակով,

• գազօջախների վրա տեղադրել մեծ մակերեսով կաթսա կամ թիթեղ առանց հավելյալ տակդիրի, քանի որ փակվում է այրման համար անհրաժեշտ թթվածնի ներհոսքը՝ առաջացնելով շմոլ գազ,

• օդատար ուղիներին միացնել ծխատար, օդաքարշ կամ օդափոխիչ, ինչպես նաև դրանք փակել լաթով, թղթով կամ այլ արհեստական միջոցներով,

• փակել օդի ներհոսքի համար նախատեսված դռան ներքևի հատվածի բացվածքը,

• ծխահեռացում իրականացնել ծալքավոր նրբաթիթեղյա խողովակների միջոցով:

Արգելվում է օգտվել գազասարքերից, եթե.

• գազասարքն անսարք է, կամ գազն այրվում է անկայուն կամ դեղնակարմրագույն մրոտ բոցով,

• չի աշխատում գազասարքի անվտանգության ինքնաշխատ համակարգը,

• ծխաօդատար համակարգում բացակայում է քարշը:

Խորհուրդ չի տրվում

• օգտվել ծխատարով ջրատաքացուցիչներից և ջեռուցման սարքերից՝ թանձր մառախուղի, ուժեղ քամիների և տարվա առավել շոգ եղանակների ժամանակ,

• գազօջախները և ծխատարով գազասարքերն օգտագործել օդորակիչների (кондиционер) հետ համատեղ:

Անհրաժեշտ է

• ծխատարով ջրատաքացուցիչները և ջեռուցման սարքերը միացնելուց առաջ և միացնելուց 3 րոպե հետո լուցկու բոցի մոտեցման եղանակով ստուգել ծխատար ուղիներում քարշի առկայությունը,

• ծխատար ուղում քարշի բացակայության դեպքում դիմել «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերություն,

• առատ ձյուն տեղալու դեպքում հաճախակի ստուգել ծխատար խողովակի արտաքին մասի ամբողջականությունը և մաքրել գլխամասը:



Զայնաազդանշանային անվտանգության համակարգ

Զայնաազդանշանային անվտանգության համակարգը ձայնային ազդանշան է տալիս և փակում է գազի մուտքը բնակարան, երբ.

- ✓ առկա է շմոլ գազի 0,01 % կուտակում,
- ✓ առկա է մեթան գազի 1 % կուտակում,
- ✓ միջավայրի ջերմաստիճանը գերազանցում է 70 ^{0}C-ը:

Զայնաազդանշանային անվտանգության համակարգը կազմված է երկու հիմնական տարրերից.

1. Զայնաազդանշանային սարք (ազդանշանիչ):
2. Էլեկտրամագնիսական անջատիչ կափույր:

Անվտանգության համակարգի անխափան աշխատանքի համար հարկավոր է.

- ապահովել կայուն և անընդհատ էլեկտրասնուցում,
- ազդանշանիչը պահել մաքուր վիճակում, խորհուրդ չի տրվում ազդանշանիչի իրանը մաքրել քիմիական նյութերով, հարկավոր է այն թեթևակի սրբել խոնավ լաթով,
- ձայնային ազդանշանի և կափույրի կողմից գազի մուտքը բնակարան փակելու դեպքում պետք է անհապաղ օդափոխել շինությունը և զանգահարել 1-04 (արգելվում է ինքնակամ գործարկել կափույրը),
- ազդանշանիչի անսարքության դեպքում (օրինակ, երբ վառվում է նարնջագույն լույսը) անհրաժեշտ է տեղյակ պահել «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությանը կամ մատակարար կազմակերպությանը:

Հիշեք, որ շմոլ գազի 0,4 - 0,5 % առկայությունը շինությունում 10 - 15 րոպեի ընթացքում մահացու է:

Շինություններում գազի հոտ զգալու դեպքում **ԱՆՀՐԱԺԵՇՏ է.**

- չծխել, չօգտվել բաց կրակից կամ կայծ առաջացնող որևէ միջոցից,
- բացել պատուհանները և օդափոխության փեղկերը,
- փակել գազասարքերի փականները,
- փակել սնող գազախողովակների վրա տեղադրված խցանային փականները,
- չմիացնել և չանջատել էլեկտրասարքավորումները,
- ընտանիքի անդամներին հանել չգազավորված տարածք և զանգահարել 1-04 վթարային շուրջօրյա ծառայություն:

Ձեր բնակարանի գազամատակարարումը կդադարեցվի, եթե.

- խոչընդոտեք ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, գազասարքի անջատման, խցանային փականի խցափակման և հոլոգրաֆիկ կնիքով կնքման աշխատանքներին,
- պոկեք հոլոգրաֆիկ կնիքը և ինքնակամ միացնեք գազասարքը:

Ներտնային գազասպառման համակարգի պատշաճ վիճակի պահպանման համար պատասխանատվություն կրում է բաժանորդը:



2020-ն Առնետի ուղեկցությամբ



Առնետի տարին յուրաքանչյուրի համար պատրաստել է շատ ապասված և հետաքրքիր իրադարձություններ:
2020-ը ճիշտ ժամանակն է ամեն բան մաքուր էջից սկսելու ինչպես անձնական, այնպես էլ ֆինանսական հարաբերություններում: Տարվա ընթացքում հնարավորություն կստեղծվի ճանաչելու իրական հավատարիմ ընկերներին, որոնք ձեր կողքին կլինեն հետագա բոլոր օրերին:
Հնարավոր է նաև, որ հենց այս տարին դառնա ամենահիշարժանը, ու հենց այս տարում գրանցած հաջողություններն ուղեկցեն ողջ կյանքում:



Խոյ

Տարվա սկիզբը թեթև հոգնություն կբերի, ճիշտ ժամանակն է դեպի ծով շրջագայություն կազմակերպելու:
Ընդհանուր առմամբ կայունություն կլինի կյանքի բոլոր բնագավառներում, հատկապես կընձեռվեն նոր, աշխատանքային հնարավորություններ: Ամեն ինչ կշարունակվի Խոյերի օգտին, եթե միայն չխուսափեն առաջին քայլը կատարելու նախաձեռնությունից:



Ցուլ

Երկար սպասված հաղթանակների, նաև մեծ սիրո ժամանակ է: Սա այն տարին է, երբ անհրաժեշտ է կատարել կարևոր ընտրություններ և մեծ ֆինանսական ներդրումներ:
Խելամիտ և հետևողական Ցուլերը կլինեն վճռական և համարձակ, ինչի շնորհիվ կկարողանան էականորեն բարելավել ֆինանսական վիճակը և ունենալ աշխատանքային ձեռքբերումներ: Միայնակ և համառ Ցուլերը կկարողանան վերջապես հանդիպել իրենց կյանքի ամենամեծ սիրուն:



Երկվորյակ

Ավելի քան երբևէ պետք է արագացնել տեմպերը կյանքի բոլոր ոլորտներում՝ բարելավելու համար այն բոլոր տեսանկյուններից: Որքան կյանքը հաճելի է և կրքով հարուստ, այնքան եկամուտը կայուն է և առատ: Սերն Առնետի ուղեկցությամբ բուռն է՝ հանդիպումներ, բաժանումներ, ինտրիգներ, խանդի տեսարաններ և, իհարկե, happy end:



Խեցգետին

Տարին բերում է կայուն հարաբերություններ, փոխադարձ վստահություն, բավական է միայն համբերություն դրսևորել ու պատրաստ լինել փոփոխությունների:
Ճանապարհորդություն հեռավոր երկրներ, նոր ծանոթներ և լայն հեռանկարներ: Սիրո մեջ անդորր է, ընտանեկան կյանքը՝ խաղաղ:



Առյուծ

Առյուծներին նոր, աշխատանքային հարաբերություններ են սպասվում, հատկապես եթե նրանք գործարարներ են ու նոր հեռանկարներ են փնտրում:
Կյանքը լի կլինի կենսունակությամբ և ուժով, պետք է միայն խելամիտ լինել և՛ բիզնեսում, և՛ անձնական կյանքում կարգ ու կանոն հաստատելու համար:



Կույս

Կույսերի աշխատասիրությունն Առնետի սրտով է: Սիրո և առողջության առումով էական փոփոխություններ չեն սպասվում: Իսկ ահա տարին եկամտաբեր կլինի: Բայց պետք չէ կանգ առնել և բավարարվել ձեռք բերածով: Միշտ կարելի է հասնել ավելիին:



Կշեռք

Կշեռքների ակտիվությունը կբերի լավ արդյունքներ ու բարձր եկամուտներ: Համեմատաբար թեթև տարի է: Չկան պարտականություններ ընտանիքի կամ աշխատանքի նկատմամբ: Սակայն չպետք է անտեսել ծնողների և երեխաների հետ ժամանակ անցկացնելու կարևորությունը:

Առնետը սիրում է պատասխանատու և աշխատասեր մարդկանց: Ուրեմն ապացուցեք նրան, որ դուք հենց այդպիսին եք:



Կարիճ

2020-ը Կարիճի համար ազատության տարի է: Սա լավ ժամանակ է աշխատանքային հմտությունները զարգացնելու, նաև դրական էներգիան մտերիմներին փոխանցելու համար:

Գալիք տարում Կարիճների մոտ դժվարություններ կծագեն մեծամասամբ հենց իրենց մեղքով: Եվ դրանք կկատարվեն ոչ հենց այնպես, այլ որպեսզի արժեքավոր դաս լինեն:



Աղեղնավոր

Եթե չեք վախենում լուրջ հարաբերություններից, երջանկությունը չի ուշանա: Սա հիանալի ժամանակ է հանգստանալու, ընտանիքի ու երեխաների մասին մտածելու և որոշումներ կայացնելու համար: Բայց հաջողության հասնելու համար դուք պետք է համբերատար լինեք: Ֆինանսական հոսքը լեռների ետևում չէ:



Այծեղջյուր

Այծեղջյուրների համար տարին լի կլինի հաճելի անակնկալներով: Կարիերայում սպասվող կտրուկ առաջխաղացումը կբերի ֆինանսական բարգավաճում: Անձնական հարաբերություններում միայն ներդաշնակություն է: Չպետք է բաց թողնել արձակուրդի հնարավորությունը, քանի որ միայն ներքին հանգստությունն ու խաղաղությունը կօգնեն օգտվել ընձեռված հնարավորություններից և քաղել եկող տարուց առավելագույնը:



Ջրհոս

Տարին կարծես հենց Ջրհոսների համար է՝ գեղեցիկ ընտանիք, հարստություն տարածքի ընդլայնում:

2020-ը ստեղծագործական գագաթնակետի տարի է: Ապացուցեք, որ Ջրհոսը կարող է լինել և՛ կատարյալ ամուսին, և՛ կատարյալ ծնող:



Ձկներ

2020-ն արկածախնդրության տարի է, համարձակ փոփոխությունների տրամադրող կյանքի բոլոր բնագավառներում: Ազատվեք մեծ ու փոքր անհարմարություններից, դրանք միայն կարող են խանգարել: Տարվա վերջում հնարավոր են ամուսնություն և պաշտոնի բարձրացում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սպառողների ազգային ասոցիացիան 1998-ից
Սպառողների միջազգային կազմակերպության անդամ է.....2
ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ ընկերություն.....4
ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ ընկերություն.....5
ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ ընկերություն.....6
ԵՐԵՎԱՆԻ ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ.....7
ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ.....8
ՍԱՆՖՈՒԴ ընկերություն.....9
ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....10
ՆՈՐՔ-ՄԱՐԱԶ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....11
ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏ ընկերություն.....12
ԲԱՆԴԻՎԱՆ ԿԱԹ ընկերություն.....13
ՕՎԱԼ ՊԼԱՍՏԻԿ ընկերություն.....14
ԴԻԼԻՋԱՆ ԳԱՐԵՋՈՒՐ ընկերություն.....15
ԵՐԵՄՅԱՆ ՊՐՈՋԵՔԹՍ ընկերություն.....16
ՎԻ-ԷԼ-ՎԻ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑ.....17
ՀԵԼԻՈՍ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....18
ՎԱԼԱՆ ԳՐՈՒՊ ընկերություն 19
ՊՈՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ.....20
ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱԼՐԱՂԱՑ ԳՈՐԾԱՐԱՆ.....21
ԵՐԵՎԱՆԻ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ.....22
ՀԵԼԻՈՍ ՊՈԴՈԼՈԳԻԱ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....23
ՌՈՅԱԼ ԱՐՄԵՆԻԱ ընկերություն.....24
ԷԿՈՍԵՆՍ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....25
ՄԵՂՐՈՒ ճՇՇՁ ՍՊԸ.....26
ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ.....27
ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔ.....28
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՋԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ.....29
ԱՐՑԱԽԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ.....30
ՌԵՅՓՍԻԴ ընկերություն 31
Sunflower ընկերություն.....32
ՌԻՄԱ ԹՐԱՎԵԼ ընկերություն.....33
ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻ ընկերություն.....34
ԹԱՄԱՐԱ ընկերություն.....36
ԱԹԵՆՔ ընկերություն.....38
ԱՇՏԱՐԱԿ-ԿԱԹ ընկերություն.....40
ՑԱՐԻՑԻՆՈ ընկերություն.....42
ՉԱՆԱԽ ընկերություն.....44
ԱՐՄ ՄԻԹ ընկերություն.....46
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ,
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....48
ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ ընկերություն.....51
ՀՈՐՈՍԿՈՊ 2020.....54

Հասցեն՝ Դավիթ Անհաղթ 23, 3-րդ հարկ
Թեժ գիծ՝ (010) 24-92-04
E-mail: info@armconsumer.am;
nationalconsumerassociation@yahoo.com
URL:http//www.armconsumer.am

Տպաքանակը՝ 2000: Ծավալը՝ 2 մամուլ
Տպագրվել է ՏՊԱՐԱՆ ԷՅ ԷՄ
տպագրատանը
Բաժանվում է անվճար
Գրանցման վկայականը՝ 2215
Հղումը ՍՊԱՌՈՂ-ին պարտադիր է

ԷԷ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ

AEG SERVICE

- Բնակարանների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկում:

- Կենցաղային օբյեկտների տեխնիկական սպասարկում:

- Արտադրական նշանակության օբյեկտների տեխնիկական սպասարկում:

- Գազօգտագործող սարքավորումների վերանորոգում և կարգաբերում:



- Գազափնտրիչ սարքերի արտադրություն (LD-1M):



- Ջայնաազդանշանային անվտանգության համակարգի վերանորոգում:



- Ընկերության աշխատակիցների ուսուցում և վերապատրաստում:





Մեր աշխատանքը Ձեր անվտանգության երաշխիքն է

ՀՀ, 0021, ք. Երևան, Ադոնցի 10
Հեռ.՝ +374 10 20 94 60
Ֆաքս՝ +374 10 23 65 01
Էլ.փոստ՝ aeg@aegservice.am
Կայք՝ www.aegservice.am



www.armconsumer.am